Մեր խնդիրն ենք համարում գտնել և ցույց տալ այն ընդհանրությունները, որոնք հնարավոր են դարձրել այս երկու ուղղությունների ներկայացուցիչների հարաբերությունների սերտացմանը: Մինչ բուն խնդրին անդրադարձ կատարելը, հարկ ենք համարում համառոտ կերպով ներկայացնել, թե ինչպիսի քաղաքական իրադրությունում էր տիրում միջնադարյան Հայաստանում ու Հայոց եկեղեցում, և ինչքանով այդ ամենը կապ ուներ պատկերամարտների և պավլիկյանների համատեղ հանդես գալու հետ:

Հայաստանի քաղաքական իրադրությունը Ջ դարի երկրորդ և Է դարի առաջին կեսին. Հայոց եկեղեցին

Հայոց եկեղեցին Ջ դարի երկրորդ կեսին գտնվում էր բավականին բարդ իրավիճակում. նրա ինքնուրույն գոյությանը սպառնում էր մի կողմից Բյուզանդական կայսրությունը, իսկ մյուս կողմից էլ Սասանյան Պարսկաստանը: Ջ դարի երկրորդ կեսին սկսված և շուրջ 20 տարի տևած պարսկա-բյուզանդական պատերազմի արդյունքում (571-591 թթ.) Հայաստանը երկրորդ անգամ բաժանվում է Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև: Այս անգամ, ի տարբերություն 387 թվականի բաժանման, Հայաստանի մեծ մասը բաժին է ընկնում Բյուզանդական կայսրությանը:

Պարսկա-բյուզանդական հաջորդ պատերազմը (602-628 թթ.) Հայոց աշխարհին չբերեց սահմանային ոչ մի փոփոխություն՝ բացի ավերածություններից ու տառապանքներից: Նվաճելով և իրար միջև բաժանելով Հայաստանը, թե՛ Բյուզանդիան և թե՛ Սասանյան Իրանը ձգտում էին իրենց տիրապետությունը հայերի վրա հարատև դարձնելու համար ռազմական միջոցներից բացի օգտագործել դավանական գործոնը, որն ի տարբերություն շատ հաճախ կարճաժամկետ ազդեցություն ունեցող ռազմական բիրտ

ուծի, հաջողություն ունենալու պարագայում, երկարաժամկետ կտրվածքով օժանդակելու էր ազգային ինքնության հիմքերը խարխալելուն և այն վերափոխելով՝ նպաստելու էր երկու տերությունների համար հնազանդ հպատակների ձևավորմանը: Քանի որ դավանական մասնիկը՝ որպես արժեհամակարգի և ինքնության առանցքային բաղադրիչ, էական (երբեմն նույնիսկ վճռական) դեր ուներ միջպետական հարաբերություններում, ուստի այն քաղաքական համակարգի կողմից օգտագործվում էր որպես ազդեցության լծակ:

Բյուզանդական կայսրության կողմից եկող վտանգը Հայոց եկեղեցու համար դա քաղկեդոնական դավանության պարտադրանքի փորձերն էին: 571թ. հայերի հարուցած ապստամբությունը հանգեցրեց հայ-բյուզանդական ռազմա-քաղաքական դաշինքի, որի համար, իբրև պարտադիր պայման, բյուզանդական կողմն առաջ քաշեց հայ և բյուզանդական եկեղեցիների դավանական միության խնդիրը²: Մի շարք պատմագիրներ թողել են հիշատակություններ այդ միության մասին³: Թեև այդ միությունը համաձայնություն էր տվել Կ. Պոլիս գնացած Հովհաննես Բ Գաբեղենացի (557-574 թթ.) կաթողիկոսը, սակայն այն մերժվեց հայ հոգևորականներից շատերի կողմից⁴: Հայ և բյուզանդական եկեղեցիների միջև դավանական ներհակությունը շարունակվեց բյուզանդա-

² Վարդանյան Վ., 571 թվականի հայ-բյուզանդական դավանական միության հանգամանքները, «Էջմիածին» Զ-Է, 2002, էջ 61:

³ Ստեփանոս Տարսուեցի (Մաղղիկ), Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, II, Բ, էջ 85: Պատմութիւն Սեբեոսի, Մատենագիրք Հայոց, Դ հատոր, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 471: Մատրական աղբյուրներ Ա, առաջաբան, թարգմանություն և ծանոթ. Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 391-392: Բարթիկյան Հ., «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, Բանբեր Մատենադարանի, № 6 (այսուհետև՝ *Narratio de rebus Armeniae*), Եր., 1962, էջ 465 /բնագրի գիտական հրատարակությունը տե՛ս. La Narratio de rebus Armeniae. édition critique et commentaire Gérard Garitte, Louvain, 1952/: Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ս, Երևան, 1934, էջ 41-42:

⁴ Michel le Syrien, Chronique, II ed. Chabot, Paris, 1901, p. 305.

պարսկական պատերազմի (572-591 թթ.) գրեթե ողջ ընթացքում, երբ կողմերը «քսան տարի վիճում էին հավատքի շուրջ»⁵:

Հայոց եկեղեցուն քաղկեդոնականություն պարտադրելու հաջորդ փորձը եղավ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև տեղի ունեցած Հայաստանի երկրորդ բաժանումից հետո, երբ Մորիկ կայսրը փորձում էր հայոց եկեղեցին ամբողջությամբ ենթարկել բյուզանդական եկեղեցուն: Կայսեր նախաձեռնությամբ 591 թ. Կոստանդնուպոլսում գումարվում է ևս մեկ եկեղեցական ժողով, որին մասնակցելու համար Մորիկը Կոստանդնուպոլիս է հրավիրում հայոց բոլոր եպիսկոպոսներին և Հայաստանի պարսկական մասում աթոռակալող Մովսես Բ Եղվարդեցի (574-604 թթ.) կաթողիկոսին: Սակայն կաթողիկոսը հրաժարվում է գնալ՝ տալով հետևյալ պատասխանը. «Ես չեմ անցնի Ազատ գետը, չեմ ուտի փռան հացը և չեմ խմի ջրախառն տաք գինի»⁶: Սակայն ժողովին մասնակցում են Մովսես Բ-ի պատվիրակները՝ նրա գործերի հավատարմատար եւ ապագա տեղապահ Վրթանես Քերթոզը՝ Քշկանորդի մականունով (տեղապահ է եղել Մովսեսի մահից հետո 604-607 թթ.) ու Գրիգոր եպիսկոպոսը⁷: Այդ մասին հաղորդում է նաև Սամվել Անեցին. «Գրիգոր եւ Վրթանես վարդապետք Հայոց գնացին ի Յոյնս եւ ոչինչ օգտեցուցեալ զնոսա դարձան նգովելով»⁸:

Վասպուրականի եպիսկոպոսները և նրանք, ովքեր գտնվում էին Պարսից տիրապետության տակ, նույնպես չցանկացան մեկնել Կոստանդնուպոլիս: Իսկ Տարոնի եպիսկոպոսները, և ովքեր, որ գտնվում էին բյուզանդացիների տիրապետության տակ, գնացին: Երբ նրանք վերադարձան Հայաստան, Մովսես կաթողիկոսը և եպիսկոպոսները չընդունեցին նրանց: Նրանք իրենց կաթողի-

⁵ **La Narratio de rebus Armeniae**, p. 38-39.

⁶ **Բարթիկյան Հ.**, «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայքաղկեդոնական սկզբնաղբյուր, Բանբեր Մատենադարանի, № 6 (այսուհետև՝ **Narratio de rebus Armeniae**), Եր., 1962, էջ 466-467:

⁷ **Օրմանեան Սաղաքիա եպիսկոս**, Ազգապատում, Մայր աթոռ Ս. Էջմիածին, Հատոր Ա, 2001, էջ 674:

⁸ **Սամուէլ Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Երեւան, 2011, էջ 95:

կոս ձեռնադրեցին Նովհաննեսին՝ Կոզովիտի Բագարան գյուղից⁹: Այսպիսով, Մորիկը Հայաստանի բյուզանդական մասում՝ պարսկա-բյուզանդական սահմանի մոտ ընդդեմ Դվինի միաբնակ կաթողիկոսության հիմնեց հակաթոռությունն՝ Ավանում, հայ քաղկեդոնական Նովհաննես Բագարանցու զլխավորությամբ¹⁰:

Հայոց եկեղեցու և բյուզանդական քաղկեդոնական եկեղեցիների միության հաջորդ նախաձեռնությունը Հերակլիոս Ա (610-641թթ.) կայսրինն էր: Իրանի դեմ վարած հաղթական պատերազմի արդյունքում Բյուզանդիայի վերագրավված արևելյան նահանգներում բավականին մեծաքանակ էր ոչ քաղկեդոնական եկեղեցիների հետևորդների թիվը: Եվ Հերակլիոս Ա-ի արևելյան ոչ քաղկեդոնական եկեղեցիների հետ միջոլավանաբանական երկխոսություն սկսելու արդյունքում սկզբնավորվում է Արևելահռոմեական կայսրության նոր միարարական քաղաքականությունը՝ հիմնված ի Քրիստոս «մի ներգործություն» (μία ἐνέργεια), այնուհետև «մի կամք» (μία θέλημα) դավանելու վարդապետությունների վրա¹¹:

Սասանյան Իրանին պարտության մատնելուց և Քրիստոսի՝ 614 թ. գերեվարված կենարար Խաչափայտը Երուսաղեմ վերադարձնելուց հետո (630 թ.) Հերակլիոս կայսրը ձեռնամուխ է լինում ոչ քաղկեդոնական եկեղեցիներին կայսերական եկեղեցու հետ միավորելու բուն գործընթացին, որի ընթացքում կայսերական եկեղեցու ներակայացուցիչների և ոչ քաղկեդոնական եկեղեցիների եպիսկոպոսների միջև 630-633 թթ.-ի ընթացքում Հիերապոլսում, Հալեպում, Թեոդոսուպոլիս/ Կարին և Ալեքսանդրիայում տեղի են ունենում շուրջ չորս հանդիպում ժողովներ, որոնցից առաջին երեքը Հերակլիոս կայսեր մասնակցությամբ¹²: Թեոդոսուպոլիս/ Կարինում տեղի ունեցած 632 թ.-ի ժողովի արդյուն-

⁹ Նշվ. աշխ., էջ 466-467:

¹⁰ Դանիելյան Է., Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական Եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000, էջ 57:

¹¹ Մեքոնյան Ս., Միակամության վարդապետությունը միջեկեղեցական երկխոսության համատեքստում (7-րդ դարի առաջի կես), Ատենախոսություն, Երևան, 2018, էջ 61:

¹² Նշվ. աշխ., էջ 62:

քում Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսը կնքում է դավանական միություն Հերակլիոս կայսեր առաջարկած տարբերակով:

Բավականին բարդ վիճակում էր գտնվում Հայոց եկեղեցին Ջ դարի երկրորդ կեսին նաև Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Հայաստանում: Ինչպես հայտնի է, Խոսրով Փարվեզի (591-628 թթ.) հոր՝ Որմիզդ արքայի (579-590 թթ.) կառավարման ժամանակ Պարսկաստանում հովանավորվում էին նեստորականները, իսկ Հայաստանում կրկին առաջ էր քաշվել զրադաշտականության պարտադրմամբ դավանափոխության հարցը¹³: Մակայն Խոսրովի գահակալությունից հետո իրավիճակը փոխվեց: Պարսկաստանում հովանավորության արժանացան նաև հակաքաղկեդոնական քրիստոնյաները, քանի որ Խոսրով արքան կնության էր առել «արամեացի Շիրինին և հռոմեացի Մարիամին»¹⁴:

609 թվականից սկսած՝ Խոսրովը նեստորականներին զրկեց կաթողիկոս ընտրելու իրավունքից, և այդ արտոնությունը տրվեց Գաբրիել բժշկապետին, որը Շիրին թագուհու մտերիմն էր և մեծ ազդեցություն ուներ պարսից արքունիքում: Խոսրով Փարվեզի եկեղեցական քաղաքականության շրջադարձը, թերևս բացատրվի նրանով, որ Բյուզանդիայի հետ հակամարտության մեջ գտնվող Իրանը հովանավորելով Արևելքի հակաքաղկեդոնական եկեղեցիներին՝ ցանկանում էր կտրել նրանց Բյուզանդիայի քաղաքական շահերից և էլ ավելի սերտացնել իր հարաբերությունները այդ եկեղեցիների հետ:

¹³ Պարսկաստանի քրիստոնյաների, այդ թվում նեստորականների մասին առավել մանրամասն տե՛ս **Labourt J.**, *Le christianisme dans l'empire Perse*, Paris, 1904; **Пигулевская Н. В.**, *Культура сирийцев в средние века*, М., 1979; **Селезнев Н. Н.**, *Ассирийская церковь Востока. Исторический очерк*, М., 2001; **Rayne R. E.**, *A State of Mixture: Christians, Zoroastrians, and Iranian Political Culture in Late Antiquity*. - Oakland, 2015; **Заболотный Е. А.**, *Сирийское христианство между Византией и Ираном*, СПб., Наука, 2020.

¹⁴ **Пигулевская Н. В.**, *Анонимная сирийская хроника о времени Сасанидов (Сирийские источники по истории Ирана и Византии)*, Записки Института востоковедения Академии наук СССР, VII, Л., 1939, с. 65; **Луконин В.**, *Древний и раннесредневековый Иран*, М., 1987, с. 183-184.

Խոսքով Փարվեզն իր պետության դավանանքային քաղաքականության հարցերը քննելու համար Տիգրան է հրավիրում քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչներին: 615/16 թ.¹⁵ (այլ հաշվարկով 617/18-ին¹⁶) Տիգրանում ժողով է գումարվում և հրավիրվում են պարսկահպատակ բոլոր երկրների հոգևոր դասի ներկայացուցիչները, ինչպես նաև աշխարհիկ տերերը: Հայաստանից ժողովին մասնակցում էին Կոմիտաս Մամիկոնյան և Մատթեոս Ամատունի եպիսկոպոսները: Կոմիտաս Աղցեցին Հայոց եկեղեցու դավանության «թուղթը» տալիս է ժողովին, և նրա հետ միանում են Կամբիշո մետրոպոլիտը, Սմբատ Բագրատունին, Շիրին թագուհին, Գաբրիել բժշկապետը և տասն եպիսկոպոսներ, որոնց անունները հիշատակված են «Տեառն Կոմիտասու Հայոց Կաթողիկոսի Վասն Հաւատոց» թղթի մեջ¹⁷: Խոսքովը հրամայում է «խնդիր առնել ի գանձու տեղոյն, եւ գտին գրեալ զՆիկիայի հաւատս ճշմարիտս, եւ ի վերայ հասեալ ըստ միաբանութեան հաւատոյ աշխարհիս Հայոց, որ էր կնքեալ մատանեալ Կաւատայ արքայի եւ որդւոյ նորա Խոսրովու»: Ապա պարսից արքան հրաման է արձակում. «եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին»¹⁸: Պարսկական արքունիքի դրական վերաբերմունքը Հայոց եկեղեցու հանդեպ պահպանվում է նաև Կոմիտաս կաթողիկոսից հետո էլ:

Հայոց և Ադուանից եկեղեցական հարաբերությունները: Պատկերամարտերի ի հայտ գալը և նրանց ընդհանրությունները պավլիկյանների հետ

Քաղկեդոնական դավանանքի տարածման գործում բյուզանդական եկեղեցին, բացի Հայաստանից, հետևողական կերպով ա-

¹⁵ **Դանիելյան Է. Լ.**, Հայ եկեղեցու նկատմամբ Խոսրով Փարվեզի վարած քաղաքականությունը, ՊԲՀ, 1981, համար 4, էջ 197: **Յակոբեան Ա.**, «Աշխարհացոյց» Է դարի Անանունի: Գիտաքննական բնագիր, Հանդես ամսօրեայ, Ե., Վիեննա, 2015, էջ 38:

¹⁶ **Esbroeck M. Van**, L'encyclique de Komitas et la réponse de Mar Maroutha (617), "Oriens Christianus", 85, p. 162-175.

¹⁷ Տե՛ս **Գիրք Թղթոց**, Մատենագրություն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 212-219:

¹⁸ **Ասողիկ**, էջ 97:

ուաջ էր շարժվում նաև Աղվանքում և Վիրքում, որոտեղ մինչև է դարի սկիզբը և՛ վրացական և՛ աղվանից եկեղեցիները ընդունում էին Հայոց եկեղեցու գերագահությունը: Վրաստանը դավանափոխելուց հետո նա (քաղկեդոնական եկեղեցին) հույս ուներ նույնն իրագործել նաև Աղվանքում, որով իսկ կարողանալու էր փոխել նաև այդ երկրի քաղաքական կոմստրոշումը՝ զցելով նրան Բյուզանդական կայսրության գիրկը¹⁹: Այն, ինչ հաջողվեց բյուզանդական եկեղեցուն իրագործել Վիրքում, ձախողվեց Աղվանքում:

Աղվանից աշխարհում Ջ դարի երկրորդ կեսին տեղ գտած քաղկեդոնական քարոզչության մասին հայոց մատենագրությունը մեզ համար պահպանել է հետաքրքիր տեղեկություն: Մովսես Կաղանկատվացին վկայում է, որ Տեր Աբաս կաթողիկոսի (552-596 թթ.) օրոք. «Ձայն շփոթ աղմկի ավոեալ տարածեցաւ ընդ ուրտս երկրի ի ժողովոյն Քաղկեդոնի ի սնոտի և ունայն չարափառաց պղտորանէն, որ ի ներելն Աստուծոյ զորացաւ սուտ վարդապետութիւն նոցա, ղիւալուր ունկնդրութեամբն ներկեալ բազմաց ազանց հոգիքն՝ մշտնջենաւոր խաւարի կորստեան մատնեցան: Եհաս որոմնաբոյս արմատս այս յաշխարհս Աղուանից»²⁰: Մտ. Օրբելյանն ևս հաղորդում է հիշյալ ժամանակահատվածում Սյունիքում և Աղվանքում հայտնված քաղկեդոնականների մասին. «Եկին ոմանք նեստորականք և Քաղկեդոնիկքն և խաբկանօք բնակեցան յաշխարհս Միսական և յԱղվանս»²¹:

Քաղկեդոնական քարոզչության մասին բացի վերոհիշյալ սկզբնաղբյուրներից, մենք տեղեկություն ենք քաղում նաև այն նամակագրությունից, որը տեղի էր ունեցել Տեր Աբաս կաթողիկոսի և Հովհաննես Երուսաղեմացի եպիսկոպոսի միջև²²: Հայոց

¹⁹ Վարդանյան Վ., Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, էջ 294-295:

²⁰ Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 126:

²¹ Պատմութիւն նահանգի Միսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 97-98:

²² Այս նամակագրության մասին առավել մանրամասն տե՛ս. Տեր-Մկրտչեան, Կարապետ վարդապետ, Երուսաղեմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթը, «Արաբատ», Էջմիածին, ԻԹ Տարի, (1896) Թիւ Ե, էջ 214-215, 252-256:

կաթողիկոս Հովհաննես Բ Գաբեղենացին քաղկեդոնականության քարոզչությանը հակազդելու համար նամակներ²³ է ուղղում Տեր Աբասին և Սյունյաց եպիսկոպոս Տեր Վրթանեսին, Միհրաբաշի իշխանին: Ըստ երևույթին, կաթողիկոսի ջանքերը հասնում են իրենց նպատակակետին ու մենք իմանում ենք այս տարածքներում քաղկեդոնականների հալածվելու մասին²⁴:

Ինչպես գիտենք, Կոստանդնուպոլսում վախճանված Հովհաննես Բ-ին հաջորդում է Մովսես Բ Եղվարդեցին, իսկ այդ ժամանակ Տեր Աբասը դեռ հովվում էր Աղվանքում և աղբյուրները լրում են երկու կաթողիկոսների համագործակցության մասին²⁵: Հայոց մատենագրությունում պահպանվել են վկայությունները նաև Մովսես Եղվարդեցուն հաջորդած հայոց Աբրահամ Ա Աղբաթանեցի (607-615 թթ.) կաթողիկոսի օրոք եղած հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունների մասին: Տեր Աբասի մահից հետո Աղվանքում կաթողիկոս է դառնում Վիրոն (596-629 թթ.): 607 թ. Դվինում ժողով է գումարվում, ուր քննվող նվիրապետական հարցերի շրջանակում պետք է լուծվեր առանցքային խնդիր՝ կաթողիկոսի ընտրության հարցը: Այս ներկայացուցչական ժողովին մասնակցում էին մեծ թվով հոգևոր և աշխարհիկ տերեր Բյուզանդական և Պարսկական Հայաստաններից ու Վրաց աշխարհից: Դվինի ժողովին հրավիրված էր նաև Աղվանքի կաթողիկոսը, ով սակայն, ներկա չէր. «Իսկ կաթողիկոսն Աղուանից, որ յանժամ Արք Եպիսկոպոս էր կաթողիկոսին Հայոց, հակառակութեամբ ինչ իրիք ոչ եկն ի ժողովն»²⁶: Իսկ այս ամենը խոսում էր հայ-աղվանական եկեղեցական «ոչ լավ» հարաբերությունների

²³ **Թուղթ գոր տեր Յոհնաննես Հայոց կաթողիկոս եւ այլ եպիսկոպոսունք**, առ Միւնեաց եպիսկոպոսն եւ առ Տերն արարին, Գիրք Թղթոց, էջ 78-81, Թուղթ գոր տեր Յոհնաննես Հայոց կաթողիկոս եւ այլ եպիսկոպոսունք, առ Աղուանից եպիսկոպոսունս արարին, Գիրք Թղթոց, էջ 81-85:

²⁴ **Տեր-Մկրտչեան Կարապետ վարդապետ**, Երուսաղեմի Յովհաննես եպիսկոպոսի թուղթը, «Արարատ», Էջմիածին, ԻԹ Տարի (1896), Թիւ Ե, էջ 256:

²⁵ **Մվազյան Հ.**, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները Զ. դարում, «Էջմիածին» ԿԹ տարի (2013), համար Ա, էջ 51-52:

²⁶ **Ուխտանէս եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, Լիբանան, 2010, էջ 551:

մասին և կարելի է կարծել, որ այդ ամենում պետք է դեր խաղացած լիներ Աղվանքում տեղ գտած քաղկեդոնական քարոզչությունը: Ամենայն հավանականությամբ, Վիրո կաթողիկոսի ժամանակ աղվանից եկեղեցին որոշ ժամանակ հարել էր քաղկեդոնական դավանությանը²⁷:

Է դարի սկզբին Աղվանքում հակապարսկական ապստամբություն է ծագում, որը պարտություն է կրում, իսկ կազմակերպիչները դաժան հաշվեհարդարի զոհ են դառնում: Այս ապստամբությանը հանցակից համարվող Վիրո²⁸ կաթողիկոսն էլ կանչվում է Տիգրան և 25 տարի պահվում այնտեղ. «Մանասանդ ի թարգմանութիւն լեզուին Պարսից վարժեալ նորա ամս քսան եւ հինգ ի դիպահուջ առ դրանն Խոսրովու յանցական գտելա զնա ընդ ապստամբողս մեծամեծաց իշխանաց աշխարհիս Աղուանից, որք ապստամբեցան յարքայէն Պարսից եւ կորեան անկան բազումք ի ի նոցանէն, ոմանք՝ ի սուր, եւ ոմանք՝ տարագրեալք յաշխարհս հեռաւորս: Իսկ նա փախստեա անկանէր ի դուռն արքունի եւ յաջողեցաւ առաջի նորա, զի շնորհք սրբոյ նշանի նորա յորդեցին նմա ճանապարհ ի դուռն թագուհւոյն, որ մեծաւ ջանիւ կարաց գտանել ի պարգելի զկեան նորա ի թագաւորէն²⁹»: Եթե հաշվի առնենք, որ Խոսրովի կանանցից մեկը Մորիկ կայսեր դուստրն էր և սկզբնաղբյուրները տեղեկություն չեն տալիս թե թագուհիներից որ մեկի հովանավորյալն էր Վիրո կաթողիկոսը, ապա մեծ հավանականությամբ հենց նրա հովանավորությունն էլ վայելել է կաթողիկոսը իր 25-ամյա «պատվավոր» գերության ընթացքում:

²⁷ Աղվանից եկեղեցու ժամանակավոր անջատման մասին առավել մանրամասն տե՛ս **Գալուստ Ս. Մկրտչեան**, Անանիա Մոկացի, Արարատ, 1897, թիվ Ա, էջ 137, Գիրք թղթոց, Տիփլիս, 1901, էջ 193-194: **Յակոբեան Ա.**, «Մատենագիրք Հայոց», հ. Դ, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 19-20:

²⁸ Վիրոյի «ապստամբության» մասին առավել մանրամասն տե՛ս **Մ. Եպ. Բարխուտարեանց**, Պատմութիւն Աղուանից, հտ Ա, Թիֆլիս, 1902, էջ 92-93: **Ակինեան Հ. Ն.**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 197-200: **Акопян А. А.**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 191-192:

²⁹ **Անանուն Կաղանկատուացի**, Մատենագիրք Հայոց, Անթիլիաս-Լիբնան, 2005, Դ հատոր, Է դար, էջ 397:

Արբահամ կաթողիկոսին հաջորդած Կոմիտաս Ա Աղեցու (615-628 թթ.) ժամանակ հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունների մասին պատկերացում կազմելու համար հարկ է մեջբերում անել «Պարսից ժողովից» մասին Մեբեոսի հիշատակությունից. « Իսկ որք զՔաղկեդոնին զՎիրոյ զԱղունաից կաթողիկոսն և այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ, և իշխաքն, որք եկեալ էին ի ծառայութիւն Պարսից թագաւորի.... Եվ տուեալ թագաւորն խնդիր առնել ի գանձու տեղոյն և գտին գրեալ զՆիկիայի հաւատս ճշմարիտս, և ի վերայ հասեալ ըստ միաբանութեան հաւատոյ աշխարհիս Հայոց, որ էր կնքեալ մատանեաւ Կաւատայ արքայի և որդւոյ նորա Խոսրովու: Յորոյ վերայ հրաման ետ արքայ Խոսրով, եթէ ամենայն քրիստոնէայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին»³⁰: Դատելով Խոսրով արքայի հրամանից, Հայոց դավանանքը պետք է պարտադիր լինէր նաև աղվանների համար³¹:

Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունների մասին մեզ համար հաջորդ նշանակալի հիշատակությունը դա Եզր կաթողիկոսի և Աղվանից կաթողիկոս Տեր Զաքարիայի (630-645 թթ)³² ժամանակաշրջանին է վերաբերում: Կաղանկատվացին վկայում է, որ հայ-բյուզանդական եկեղեցիների հաղորդվելուց հետո «առ Եզրի կաթողիկոսիս զնաց Ստեփանոս Գարդմանայ եպիսկոպոս առ նա և հաղորդեցաւ ընդ նմա և Գարդման և Արցախ ընկալան գաւանդութիւնն զայս»³³:

³⁰ **Պատմութիւն Մեբեոսի**, Մատենագիրք Հայոց, Դ հատոր, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 542-543:

³¹ **Հակոբյան Ալ.** կարծում է, որ Կոմիտաս կաթողիկոսի օրոք հակաքաղկեդոնականությունը պարտադրվել էր աղվանից և վրաց եկեղեցիներին. **Յակոբեան Ա.**, «Աշխարհացոյց» Է դարի Անանունի, Գիտաքննական բնագիր, Հանդես ամսօրեայ, Ե., Վիեննա, 2015, էջ 40-45:

³² Տեր Զաքարիայի կաթողիկոսության կառավարման տարեթվերի վերաբերյալ քննարկումների մասին առավել մանրամասն տե՛ս Պետրոսյան Եզնիկ քնն., Աղվանից աշխարհի կաթողիկոսության մի քանի թվականների շուրջ Էջմիածին, 1984/ ԺԱ-ԺԲ, էջ 80-84: **Մ. Բալայան**, Հայ Աղվանից եկեղեցին: Սկզբնավորումից մինչև մեր օրերը, Ստեփանակերտ, 2009, 64-65: **Սվազյան Հ.**, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8 դարերում, Էջմիածին, 2019, էջ 251-256:

³³ **Մ. Կաղանկատվացի**, էջ 343:

Եթե փորձենք համառոտել և հակիրճ բնութագրել հայ-աղվանական եկեղեցական հարաբերություններն է դարի երկրորդ և Ը դարի առաջին կեսին, ապա պետք է նշենք, որ քաղկեդոնականության ազդեցության ուժեղացման արդյունքում Աղվանից եկեղեցում ակտիվացել էին անջատողական ձգտումները, որոնք ի տարբերություն Վրաց եկեղեցու, վերջնարդյունքում հաջողությամբ չպսակվեցին և Հայոց եկեղեցու գործադրած ջանքների շնորհիվ չբերեցին Աղվանից եկեղեցու անջատմանը Հայոց եկեղեցուց:

Իսկ այժմ անդրադառնանք պատկերամարտության ի հայտ գալուն, ինչը, կարծում ենք, հայ-աղվանական եկեղեցիների միությանը խաթարելուն ուղղված քաղկեդոնական ազդեցությանը հակազդելու արդյունքում առաջացած երևույթ էր:

Պատկերամարտների ի հայտ գալը, ինչպես նշում է Կ. Տեր-Մկրտչյանը, կապված է Մովսես Բ Եղվարդեցի կաթողիկոսի գործունեության հետ. «Դառնալով նորէն այն պատկերամարտներուն որոնց համար կը թուին թէ այդ պայքարը առիթ մը ծառայած է հերձուածողութեան, ի նկատ առնել պետք ենք նախ և առաջ այն պարագան, որ անոնք Մովսէս Կաթողիկոսին հակայոյն կուսակցութենէն կը ծագին, հակառակ որ կաթողիկոսը համաձայն չէր անոնց վարդապետութեանց»³⁴: Թէև հայոց մատենագրությունից մեզ հայտնի չէ Մովսես Բ Եղվարդեցուց մնացած որևէ գրություն, որն ուղղված կլիներ հակազդելու (ինչը ժամանակին արել էր նախորդ կաթողիկոս Հովհաննես Բ-ն և հաջորդող կաթողիկոս Աբրահամ Ա-ն) Աղվանքում տեղ գտած քաղկեդոնական ազդեցությանը, սակայն մեզ է հասել Վրթանես Քերթողից³⁵ և Հովհան

³⁴ **Տեր-Մկրտչյան Կարապետ Եպիսկ.**, Պաղիկեանք Բիզանդական կայսրութեան մէջ եւ մերձաւոր հերձուածային երեւոյթներ Հայաստանի մէջ, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1938, էջ 87: **Ter-Mkrtschian K.**, Die Paulikianer im byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerische Erscheinungen in Armenien, Leipzig. 1893, S. 56.

³⁵ **Վրթանէս Քերթող.** Յաղագս պատկերամարտից, Մատենագիրք Հայոց, Գ հատոր, Զ դար, Անթիլիաս, 2004, էջ 493-500:

Մայրագումեցուց³⁶ պահպանված գրությունները, որոնք կարող են լույս սփռել խնդրի պարզաբանման հարցում: Քաղկեդոնական քարոզչությանը հակազդելուն ուղղված քայլերի արդյունքում էլ Աղվանքում հանդես են գալիս առաջին պատկերամարտները: Պատկերամարտների դեմ ուղղված այս գրվածքներում և՛ Վրթանես Քերթոզի մոտ և՛ Հովհան Մայրագումեցու մոտ առկա են պատկերամարտների³⁷ անունները. «Եւ ոչ ոք ի նոցանէ վասն պատկերաց եւ նկարուց եկեղեցոյ բանս ինչ ոք արար. բայց միայն Շմուէլ եւ Թադէոս եւ Եսայի եւ ընկերք նոցա, որ եւ զյուլվս ընդ իւրանս ի յետս կացուցին, որպէս եւ զձեզդ...³⁸», «Ապա Յեսու անուն քահանայ եւ Թադէոսս եւ Գիրգոր, որ ի Մովսէսի կողմանէն էին, գնացին ի Դունայ եւ ելին ի Սողից գաւառն: Եւ բնակելով յանապատսն, զի կրանաւորք էին, սկսան ուսուցնել, եթէ զպատկերս, որ յեկեղեցիս են նկարելա, ի բաց ջնջեցէք եւ ընդ աշխարհական քահանայս մի հաղորդիք:»³⁹: Ինչպէս տեսնում ենք այս պատկերամարտները քահանաներ էին և Մովսէս կաթողիկոսի կողմնակիցները, որոնք ամենայն հավանականությամբ գնացել էին Սյունյաց նահանգի Սոթք գավառը (որը մոտ էր նաև Աղվանքին) քարոզելու և հակազդելու քաղկեդոնականության տարածմանը: Կարելի է կարծել, որ այս քահանաները բառացիորեն ըն-

³⁶ Դաւթա մեծ կողմանց եպիսկոպոսի վասն պատկերաց եւ նկարագրութեանց՝ հարցուած ի Հովհաննայ Մայրագումեցոյ, Մատենագիրք Հայոց, Դ հատոր, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 355-357:

³⁷ Հայոց մատենագրությունում հիշատակվող առաջին այս պատկերամարտերի մասին ավելի մանրամասն տես հետևյալ աշխատանքները. **Տեր-Ներսեսյան Ս.**, Հայ արվեստը միջնադարում, Երևան 1975, էջ 18-19: **Schmidt Andrea Barbara**, Gab es einen armenischen Ikonoklasmus? Rekonstruktion eines Dokuments der kaukasisch-albanischen Theologiegeschichte." In Das Frankfurter Konzil von 794: Kristallisationspunkt karolingischer Kultur Akten zweier Symposien (vom 23. bis 27. Februar und vom 13. bis 15. Oktober 1994) anlässlich der 1200-Jahrfeier der Stadt Frankfurt am Main, II, edited by Rainer Berndt, Mainz, 1997, S. 955-962:

³⁸ **Վրթանես Քերթոզ**, Յաղագս պատկերամարտից, Մատենագիրք Հայոց, Գ հատոր, Զ դար, Անթիլիաս, 2004, էջ 499:

³⁹ Դաւթա մեծ կողմանց եպիսկոպոսի վասն պատկերաց եւ նկարագրութեանց՝ հարցուած ի Հովհաննայ Մայրագումեցոյ, Մատենագիրք Հայոց, Դ հատոր, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 356-357:

դունելով Մովսես կաթողիկոսի արված պատգամը՝ «հրամայեք ամեննին չհաղորդել ընդ Հոռոման՝ հնագանդեալսն քաղկեդոնական ժողովոյն չարի, զի գործք նոցա ստութեամբ են: Մի գիրս, մի պատկերս, մի նշխար ի նոցանէ ընդունել»⁴⁰, ծայրահեղությունների էին դիմել՝ սկսելով ավերել սրբապատկերները: Կարելի է ենթադրել, որ հիշյալ քահանաները Առաքելական եկեղեցու ծայրահեղ հակաքաղկեդոնական ներկայացուցիչներն էին, որոնց քարոզներն ընդունելություն էին գտել Աղվանից աշխարհում և նույնիսկ ի հակառակ Մովսես կաթողիկոսի ջանքերի, շարունակում էին կենսունակ լինել Հովհան Մայրագումեցու ժամանակ էլ, ով գրուցելով պատկերամարտերի հետ՝ «զթիրութիւն նոցա ուղղեցաք»: Իրականում, Տեր Ուխտանեսի (671-683 թթ.) եւ Եզիազար կաթողիկոսների (683-689 թթ.) ժամանակ գործած այս պատկերամարտերին չէր հաջողվել «ուղղել», քանի որ «կշտամբեալքն ի կաթողիկոսացն Աղուանից պատկերամարտք»-ի մասին կրկին հաղիպում ենք նաև Հովհան Օձնեցու «Նորին ընդդեմ Պաղիկեանց» գրությունում, ով գրելով պավլիկյանների դեմ, հետևյալն է գրում պատկերամարտերի մասին. «նախկին մծղնեութեան պայդակենութեան խերշանք, որք խրատեալք եւ ոչ իմաստնացեալք, ի Ներսիսէ կաթողիկոսէ, զկնի նորուն մահուանն խոսեալք չորան դաւղեցին յլոբոս ուրեք աշխարհիս մերոց: Եւ ի նոսա հատուածեալք եկին յարեցան կշտամբեալքն ի կաթողիկոսացն Աղուանից պատկերամարտք ոմանք, զի սիրէ առ համանմանինս իւր հասանել վիրպեալս ի ճշմարտութենէն»⁴¹:

Մինչ պավլիկյաններին և պատկերամարտերին անդրադարձ կատարելը, կփորձենք հասկանալ, թե ովքեր էին մծղնեականները, որպեսզի հասկանանք, թե «նախկին մծղնութեան պայդակենութեան խերշանք»-ը ինչ առընչություն ուներ պատկերամարտերի հետ:

⁴⁰ **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 267-268:

⁴¹ **Նորին ընդդեմ Պաղիկեանց**, Մատենագիրք հայոց, Է հատոր, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 39-44, տ. 40-41:

Մծղնեականների և պավլիկյանների կապի մասին մասնագիտական գրականությունում առկա են մի շարք հետազոտություններ, որոնք լրացուցիչ մասնիկներ են տալիս մեզ պավլիկյանների և հայ պատկերամարտներին վերաբերող խճանկարի ամբողջականացման գործում: Երվանդ Տեր-Մինասյանը խոսելով բորբորիտների և մծղնեականների մասին կարծում է. «Մծղնեությունը, ինչպես և բոլոր արևելյան աղանդները, իրենց սկիզբն են առել մեզ արդեն բավական մանրամասնորեն ծանոթ գնոստիկականությունից, իհարկե դարերի ընթացքում փոփոխություններ կրելով, հարաբերություններ ունենալով այլ աղանդների հետ և նրանցից ազդեցություններ կրելով կամ ազդելով նրանց վրա»⁴², իսկ մեկ այլ տեղում հավելում. «Մծղների գլխավոր շեղումը քրիստոնեությունից այն էր, որ նրանք արհամարհում, մերժում էին եկեղեցական խորհուրդներն ու առհասարակ եկեղեցական աստվածապաշտությունը: Նրանց համար իսկական կրոնական խորհուրդը, ինչպես ասացինք, աղոթքն է, որտեղից և առաջացել է նրանց անունը»⁴³: Մծղնեից աղանդի և պավլիկյանների մասին հիշատակվում է նաև «Կանոնագիրք Հայոց»-ում, «Կանոնք Տեառն Յովհաննիսի իմաստասիրի հայոց կաթողիկոսի» հատվածի ԼԲ. կանոնում, որտեղ ասվում է հետևյալը. «Ոչ է պարտ ի չարաղանդ մծղնեիցն տեղիս, որ կոչին պաւլիկանք օթել ումէք և կամ յարել և խօսակից լինել և երթնեկութիւն առնել, այլ ամենևին հեռանալ ի նոցանէ, զարշել և ստել գնոսա, զի որդիք սատանայի են և լուցկիք յաւիտենական հրոյն, և օտարացեալ են ի սիրոյ կամաց արարչին: Եթե որ իցէ, որ յարեսցի ի նոսա, և ի սիրելութիւն և ի բարեկամութիւն եկեսցէ, պարտ է զայնպիսիսն խոշտանգել և ծանր պատուհաս ի վերայ դնել, մինչև զգաստացին և առողջացին ի հաւատս»⁴⁴: Խոսելով Դավիթ Մեծկողմանց եպիսկոպոսի կողմից Հովհան Մայրազմեցուն գրված նամակի մասին, հետևյալն է

⁴² **Տեր-Մինասյան Ե.**, Միջնադարյան աղանդների ծագման եվ զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 73:

⁴³ **Նշվ. աշխ.**, էջ 77:

⁴⁴ «**Կանոնագիրք Հայոց**», Ա., աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 534-535:

գրում Մովսես Կաղանկատվացին. «Ընդ այն ժամանակս, որ դեռ եւս վարէր զհայրապետութիւնն Աղուանից տէր Ուխտանէս եւ զկնի նորա՝ Եղիազար, եւ խռովութիւն եւ հերձուածք բազում ի կողմանս կողմանս զիտնաւորաց եւ տգիտաց լինէր, մարտ եւ մրցումն Յունաց եւ Հայոց, եւ աշխարհս Աղուանից անվրդով յայսցանէ մնայր, եհաս համբաւ իմն ի նոսա, եթէ ոմանք զպատկեր ոչ ընդունին, ոմանք մկրտութիւն ոչ առնեն, ոչ աղ աւրինեն, ոչ պսակ դնեն հարսանեաց՝ յայս պատճառ, եթէ քահանայութիւն բարձեալ է յերկրէս:»⁴⁵ Դավիթ Մեծկողմանց եպիսկոպոսը հիշատակում է աղանդավորների, որոնք արհամարում էին եկեղեցական խորհուրդները և ունեն որոշ նմանություններ մծղնեականների հետ: Ենթադրաբար նաև այս աղանդավորիների համար էլ պետք է ընդունելի լինէր առաջին պատկերամարտների մոտեցումները սրբապատկերների վերաբերյալ:

Իսկ հասկանլու համար, թե ունէ՞ն արդյոք գաղափարական նմանություն պատկերամարտներն և պավլիկյանները, հարկ է նախ հասկանալ թե ինչ «հանցանքի» մեջ էին մեղադրում Վրթանէս Քերթոզը, Հովհան Մայրազումեցին⁴⁶ կամ Հովհան Օձնեցին իրենց հակառակորդներին: Վրթանէս Քերթոզը գրում է. «Բայց զարմանք մի այս է, որ զպատգամսն ընդունիք եւ զիշխանն հալածէք, նշանին երկիրպագանէք եւ ի թագաւորն քարաձիգ լինիք, զխաչն պատուէք եւ զԽաչելեալն թշնամանէք: Այսպէս Մանիքեցիքն եւ Մարկիոնացիքն առ **աչաք համարին զճշմարտութեամբ**

⁴⁵ Դավթա մեծ կողմանց եպիսկոպոսի վասն պատկերաց եւ նկարագրութեանց՝ հարցուած ի Հովհաննայ Մայրազումեցոյ, Մատենագիրք Հայոց, Դ հատոր, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 355:

⁴⁶ Շմիդտ Անդրեա-Բարբարայի կարծիքով Հ. Մայրազումեցին նրանց մեղադրում է դոկետիզմի և ծայրահեղ հակաբաղկեդոնականության մեջ՝ **Schmidt Andrea Barbara**, Gab es einen armenischen Ikonoklasmus? Rekonstruktion eines Dokuments der kaukasisch-albanischen Theologiegeschichte. In Das Frankfurter Konzil von 794: Kristallisationspunkt karolingischer Kultur Akten zweier Symposien (vom 23. bis 27. Februar und vom 13. bis 15. Oktober 1994) anlässlich der 1200-Jahrfeier der Stadt Frankfurt am Main, II, edited by Rainer Berndt, Mainz, 1997, S. 959, 963-64:

մարմնանալ Փրկչին, եւ յորժամ տեսանեն զպատկերս՝ զժղմնին զայրագնեալք եւ մատուցեալք թշնամանեն»⁴⁷:

Հովհան Մայրագոմեցու պատկերամարտերին տրված հարցը ևս լույս է սփռում այն խնդրի պարզաբանման հարցում, թե ինչի՞ մեջ էին մեղադրվում պատկերամարտները. «Եւ եղեալ նոցա յանդիման մեզ՝ հարցաք, թե յո՞ր պատճառս չընդունիք **զմարմնացելոյ Աստծոյ զպատկերն**»⁴⁸ :

Կաթողիկոս Հովհան Օձնեցու թղթի սկզբում մատնանշված պատկերամարտերի գաղափարական զարգացման ընթացքը ևս կարևոր է հասկանալու համար մեր մատենագիրների մեղադրանքները. «Քանզի ասիա գտաւ որոգայթ իբրեւ զվարմ հաւորսաց ձգեալ ի մեջ ժողովրդեան ազգի իւրոյ ըմբռնել զտխմարս եւ զպարզամիտս ի մարդկանէ, որք չարեաց ի չարիս վերացեալ ելին. ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն եւ ի քրիստոսատեցութիւն, եւ անտուստ յանաստուածութիւն եւ ի դիւապաշտութիւն»⁴⁹: Պատկերամարտությունից եկող վտանգը մատնանշելով Հովհան Օձնեցին, մեկ այլ տեղում ընդգծում է, թե ինչն են հավատացյալները պաշտում. «Եւ այս է, որ **զմարմնացելոյ Բանին** Աստուծոյ վարդապետեաց մեզ պաշտել զկենդանագրեալ մարդկային ձեռով զպատկեր եւ զպատուականն զայն յաղթութեան նշան»⁵⁰: Իսկ իր գրության վերջում բացահայտում է այն ընդհանրությունը, որ միավորում է պատկերամարտերին և պավլիկյաններին. «Բայց է եւ ոչ սուղ ինչ եւ զոր առ միմեանս ունիցին նոքա զթշնամութիւն, վասն զի իւրաքանչիւրոցն նոցա չարափառութիւն յոյժ աննամանիք են միմեանց եւ տարանջատականք: Քանզի մին միով ճանապարհով եւ միւսն երկուք, որք ոչն են անմո-

⁴⁷ **Վրթանէս Քերթոյ**, Յաղագս պատկերամարտից, Մատենագիրք Հայոց, Գ հատոր, Զ դար, Անթիլիաս, 2004, էջ 495-496:

⁴⁸ Դաւթա մեծ կողմանց եպիսկոպոսի վասն պատկերաց եւ նկարագրութեանց՝ հարցուած ի Հովհաննայ Մայրագոմեցոյ, Մատենագիրք Հայոց, Դ հատոր, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 357:

⁴⁹ **Նորին ընդդէմ Պառլիկեանց**, Մատենագիրք հայոց, Է հատոր, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 37:

⁵⁰ **Նույն տեղում**, էջ 41-42, տ. 71:

լար, հակառակին անհասանելի **մարդեղութեանն Բանին** հասանել»⁵¹:

Եթէ զուգահեռներ անցկացնենք նաև բյուզանդական պատկերապաշտոների՝ պատկերամարտոներին արված մեղադրանքներին, ապա կտեսնենք, որ այնտեղ ևս մեղադրանքների առանցքը «**Ճշմարտապես զմարմնացեալ Բանին**» պատկերման հարցն էր: Ասվածը փաստարկված լինելու համար հարկ է մեջբերել պատկերապաշտոների հայտնի առաջնորդներից Գերմանոս պատրիարքի՝ Թովմա եպիսկոպոսին և Սինդոսի մետրոպոլիտին ուղղված նամականում եղած «մեղադրանքները» պատկերամարտերի հասցեին. «Տիրոջ կերպարի պատկերումը սրբապատկերների վրա Նրա մարմնական տեսքով, մերկացնում է հերձվածողների այն դատարկաբանությունը, որ Տերը միայն **երևութական** և ոչ թե իրական կերպով է մարմնացել...»⁵²:

«...մենք պատկերում ենք Նրա կերպարը և Նրա տեսքը մարմին առած, այլ ոչ թե Նրա աստվածությունը, որն անհասանելի է և անտեսանելի: Մենք ցանկանում ենք ակնառու կերպով ներկայացնել հավատի առարկան և ցույց տալ, որ Նա ոչ թե **երևութական** և անիրական կերպով է խառնվել մեր բնությանը, ինչպես որ որոշ հին հերձվածողներ սովորեցրել են: Նա իսկապես և ճշմարիտ կերպով եղել է կատարյալ մարդ, բացառությամբ մեր մեջ առկա սատանայական մեղքի»⁵³:

Իսկ պատկերապաշտոների գաղափարական առաջնորդներից մեկը՝ Հովհաննես Դամասկացին, խոսելով պատկերամարտության մասին և դիմելով Լևոն Գ-ին, պատկերամարտների մոտ տեսնում է նաև մանիքեական խորշանքը նյութի հանդեպ. «Մի հայհոյիր նյութը,- դիմում է նա պատկերամարտ կայսերը,- այն

⁵¹ **Նորին ընդդեմ Պաղիկեանց**, Մատենագիրք Հայոց, Է հատոր, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 39, 44, տ. 116-117:

⁵² **Острогорский Г. А.**, Соединение вопроса в св. иконах с христологической догматикой в сочинениях православных апологетов раннего периода иконоборчества, Seminarium Kondakovianum. I. Praga, 1927, с. 38. Հմմտ. **Migne J.-P.**, *Patrologiae cursus completus. Series graeca*, t. 98, col. 173 B (Germanus, De haeresibus et synodis), Paris (Parisiis), 1865.

⁵³ **Острогорский Г. А.**, с. 3. Հմմտ. **Migne J.-P.**, **PG**, t 98, col. 157 B.

քամահրելի չէ, քանի որ որևէ բան արհամարահարելի չէ, եթե այն Աստուծոց է: Այդ ամենը մանիքեական մտածելակերպ է»⁵⁴:

Հարկ ենք համարում մեջբերել նաև մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ կարևոր դիտարկում արած, պատկերամարտության հետազոտությամբ զբաղված հայտնի բյուզանդագետ Գեորգի Օստրոգորսկու կարծիքը⁵⁵ ևս, ով գտնում էր, որ. «կենտրոնական խնդիրը, որի շուրջ ընթանում է վեճը երկու հակամարտող կողմերի միջև, դա Քրիստոսի մարմնացման հարցն էր և ով մերժում էր Քրիստոսի սրբապատկերը, նա դուրս էր»⁵⁶:

Ինչպես տեսնում ենք, սրբապատկերների պաշտպանությամբ հանդես եկող կողմերը և՛ Բյուզանդիայում և՛ Հայաստանում կարծում էին, որ Քրիստոսին պատկերելը ծառայում է որպես երաշխիք նրա ճշմարիտ և իրական **մարմնացման**, իսկ սրբապատկերների պաշտամունքը Նրա **մարմնացման ոչ երևութական** հավատի երաշխիքն է⁵⁷:

Հակամարտող կողմերից պավլիկյանների՝ սրբապատկերների պաշտամունքի մերժման առանցքը տեսնելու համար, հարկ ենք համարում նաև անդրադարձ կատարել նրանց գաղափարախոսության մեջ մեզ հետաքրքրող խնդրի մասին՝ հիմնված բյուզանդական սկզբնաղբյուրների վրա:

Եվ ահա թե ինչ է գրում Պետրոս Սիկիլիացին պավլիկյանների մասին. «Թող ոչ ոք չկարծի թե զուր տեղը բերեցինք վկայությունները Սբ. Կույսի և Աստվածածանի մասին, քանի որ ճշմար-

⁵⁴ **Острогорский Г. А.**, с. 42. Հմմտ. Migne J.-P., Patrologiae cursus completus. Series graeca, vol. 94, col. 1245 C, Paris (Parisiis), 1864.

⁵⁵ Բյուզանդական պատկերամարտության վերաբերյալ Գեորգի Օստրոգորսկու կարծիքի մասին ավելի մանրամասն տե՛ս **Նահապետեան Գ.**, «Բյուզանդական պատկերամարտութեան եւ պատկերապաշտութեան խնդիրը Գեորգի Օստրոգորսկու աշխատանքներում», «Էջմիածին» ՀԹ տարի (2022), համար Ե, էջ 44-65:

⁵⁶ **Ostrogorsky G.**, Studien zur Geschichte des byzantinischen Bilderstreites, Breslau, 1929, S. 92.

⁵⁷ **Острогорский Г. А.**, Соединение вопроса в св. иконах с христологической догматикой в сочинениях православных апологетов раннего периода иконоборчества, Seminarium Kondakovianum. I. Praga, 1927, с. 35.

տության թշնամիները կարծում են, որ Նրա աստվածային ծննդաբերությունը իրական չէ, այլ **ենթադրություն...**⁵⁸»:

«Նրանք (առաքյալները - ընդգծումը մերն է) չէին ամաչում Քրիստոսի մարմնական տառապանքներից և հրաշքները սուտ չէին հայտարարում, այլ մտահոգ ճշմարտությամբ քարոզում էին նախախնամությամբ **մարմնացեալ Աստվածային Բանը**»⁵⁹:

Մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ արժեքավոր տեղեկություն է հաղորդում նաև Գրիգոր վանականը՝ խոսելով պավլիկյանների մասին. «Իրականում նրանք չեն ընդունում Սուրբ Կուսին որպես Աստվածածին, ինչպես նաև չեն համարում, որ Աստված **մարդեղացել** է նրա միջոցով»⁶⁰: Գրիգոր վանականի մոտ բերված տեղեկությունից իմանում ենք, որ պավլիկյանները Քրիստոսին համարում էին երկնքից իջած հրեշտակ, որը կատարում էր երկնային Աստծո կամքը, իսկ այստեղից էլ հասկանալի էր դառնում, թե ինչու Քրիստոսի մարմնանալը նրանք պետք է համարեին երեկության և ոչ իրական. «Նրանք (պավլիկյանները-ընդգծումը մերն է) ասում են, որ Աստված սիրեց մարդկային ցեղը և ցանկացավ ընդունել նրան: Նա կանչեց իր հրեշտակներից մեկին և հայտնեց նրան իր ցանկության և մտադրության մասին: Իսկ հետո հանձնարարեց իջնել երկիր, ծնվել կնոջից և մարդկանց քարոզել, որ իրենց Աստվածը ոչ թե երկնային աստվածն է, այլ իրենց արարող աստվածը, որն բնակվում է իրենց մեջ, և հրեշ-

⁵⁸ **Бартикан Р.**, Источники изучения павликианского движения, Ер., 1961, с. 121. Հմմտ. Τοῦ αὐτοῦ Πέτρου Σκελιώτου, ἱστορία χρειώδης ἔλεγχός τε καὶ ἀνατροπῆ τῆς κενῆς καὶ ματαιᾶς αἰρέσεως τῶν Μανιχαίων, τῶν καὶ Παυλικιάνων λεγομένων, προσωποποιηθεῖσα ὡς πρὸς τὸν ἀρχιεπίσκοπον Βουλγαρίας.-Travaux et mémoires 4, Centre de recherche d'histoire et civilisation de Byzance (Paris, France), 1970, p. 15, n. 22.

⁵⁹ **Бартикан Р.**, Источники изучения павликианского движения, Ер., 1961, с. 123. Հմմտ. Travaux et mémoires 4 (1970), p. 17, n. 31-33.

⁶⁰ **Johann Friedrich**, Der ursprüngliche bei Georgios Monachos nur theilweise erhaltene Bericht über die Paulikianer - Sitzungsberichte der philosophisch-philologische und historische Klasse der Bayerischen Akademie der Wissenschaften München, 1897, S. 72. Հմմտ. **Бартикан Р.**, Источники изучения павликианского движения, Ер., 1961, с. 199.

տակին, որ համաձայնել էր կատարել հանձնարարությունը, շնորհեց որդու անունը»⁶¹:

Գրիգոր վանականը խոսում է նաև սրբապատկերի պաշտելու պատճառի մասին, որը խորթ էր պավլիկյաններին. «Ես մեծարում և պաշտում եմ սրբապատկերում Քո (Քրիստոսի - ընդգծումը մերն է) **մարդացյալ սուրբ կերպարը**, որի միջոցով հնացեալս վերակենդանացավ...»⁶²:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եթե ընդհանրացնենք, ապա կտեսնենք, որ է դարի սկզբին Հայոց եկեղեցին հայտնվել էր բավականին բարդ վիճակում և ստիպված էր քաղկեդոնական եկեղեցու քարոզչությանը հակադրելու համար զգալի ջանքեր գործադրել: Մովսես Բ Եղվարդեցի կաթողիկոսի կողմից ուղարկված քահանաների քարոզները նպաստում են Աղվանքում պատկերամարտության առաջ գալուն: Է դարի սկզբին Աղվանքում հանդես եկած պատկերամարտների գաղափարները կենսունակ են գտնվում մինչև Ը դարի սկզբ և չնայած այն հանգամանքին, որ Ը դարի պատկերամարտները Հ. Օձնեցու պնդմամբ պավլիկայնների հետ «միմեանս ունիցին նոքա զթշամութին», այնուամենայնիվ, հանդես են եկել համատեղ կերպով: Իսկ այդ համատեղ հանդես գալուն օգնել է Քրիստոսի մարդեղացման հարցի շուրջ մոտեցումների ընդհանրությունը: Քանի որ երկու ուղղությունների համար էլ որպես ընդհանրության հիմք «Ճշմարտապես զմարմնացեալ Բանին» հարցն էր, ապա կարծում ենք, որ եղած ընդանրության ձևավորմանը գաղափարական հիմքում պետք է ընկած լիներ դոկետական մոտեցումը:

⁶¹ **Johann Friedrich**, S. 74-75. Հմմտ. **Бартикан Р.**, Источники изучения павликианского движения, Ер., 1961, с. 201-202.

⁶² **Johann Friedrich**, S. 81. Հմմտ. **Бартикан Р.**, Источники изучения павликианского движения, Ер., 1961, с. 207.

ARMENIAN ICONOCLASTS AND PAULICIANS IN THE 8th-9th CENTURIES

Summarizing we will see that the Armenian Church was in a rather difficult situation in the beginning of VII century and had to make significant efforts to counteract the propaganda of Chalcedonian Church.

The sermons of the priests sent by Catholicos Movses II of Yeghvardetsi contributed to the emergence of iconoclasm in Aghvank.

The ideas of iconoclasts acting in Aghvank in the beginning of VII century were viable until the beginning of VIII century and despite the fact that the iconoclasts of the VIII century have enmity with Paulicians according to Hovhan Odznetsi, however, they acted together.

And that joint action was helped by the generality of approaches to the question of the incarnation of Christ.

Since the basis of commonality for both directions was the question of "the truly embodied Thing", we believe that the docetic approach should have been the ideological basis for the formation of the existing difference.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ալիևեան Հ. Ն.**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970:
2. **Ասորական աղբյուրներ Ա.**, առաջարան, թարգմանություն և ծանոթ. Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976:
3. **Բալայան Մ.**, Հայ Աղվանից եկեղեցին: Սկզբնավորումից մինչև մեր օրերը, Ստեփանակերտ, 2009:
4. **Բարթիկյան Հ.**, «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, Բանբեր Մատենադարանի, № 6, Եր., 1962:
5. **Բարխուտարեանց Մ. եպ.**, Պատմութիւն Աղուանից, հտ Ա, Թիֆլիս, 1902:
6. **Գիրք Թղթոց**, Մատենազրուրիւն նախնեաց, Թիֆլիս, 1901:

7. **Դանիելյան Է.**, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական Եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000:

8. **Դանիելյան Է. Լ.**, Հայ եկեղեցու նկատմամբ Խոսրով Փարվեզի վարած քաղաքականությունը, ՊԲՀ, 1981, հ. 4:

9. **«Կանոնագիրք Հայոց»**, Ա., աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964:

10. **Մատենագիրք Հայոց**, Գ հատոր, Զ դար, Անթիլիաս, 2004:

11. **Մատենագիրք Հայոց**, Դ հատոր, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005:

12. **Մատենագիրք Հայոց**, Է հատոր, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007:

13. **Մատենագիրք Հայոց**, ԺԵ հատոր, Ժ դար, Լիբանան, 2010:

14. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, Երևան, 1934:

15. **Մելքոնյան Ս.**, Միակամության վարդապետությունը միջեկեղեցական երկխոսության համատեքստում (7-րդ դարի առաջի կես), Ատենախոսություն, Երևան, 2018:

16. **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983:

17. **Յակոբեան Ա.**, «Աշխարհացոյց» Է դարի Անանունի, Գիտաքննական բնագիր, Հանդես ամսօրեայ, Ե., Վիեննա, 2015:

18. **Նահապետեան Գ.**, «Բիզանդական պատկերամարտութեան եւ պատկերապաշտութեան խնդիրը Գեորգի Օստրոգորսկու աշխատանքներում», «Էջմիածին» ՀԹ տարի (2022), համար Ե:

19. **Պատմութիւն նահանգի Միսական**, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց, Թիֆլիս, 1910:

20. **Պետրոսյան Եզնիկ քին.**, Աղվանից աշխարհի կաթողիկոսության մի քանի թվականների շուրջ Էջմիածին, 1984, ԺԱ-ԺԲ:

21. **Սամուել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Երևան, 2011:

22. **Ստեփանոս Տարօնեցի (Ասողիկ)**, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

23. **Սվազյան Հ.**, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները Զ. դարում, «Էջմիածին» ԿԹ տարի (2013), համար Ա:

24. **Սվազյան Հ.**, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8 դարերում, Էջմիածին, 2019:

25. **Վարդանյան Վ.**, 571 թվականի հայ-բյուզանդական դավանական միության հանգամանքները, «Էջմիածին», Զ-Է, 2002:

26. **Վարդանյան Վ.**, Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005:

27. **Տեր-Մինասյան Ե.**, Միջնադարյան աղանդների ծագման եվ զարգացման պատմությունից, Երևան 1968:

28. **Տեր-Մկրտչեան Կարապետ վարդապետ**, Երուսաղեմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթը, «Արարատ», Էջմիածին, ԻԹ Տարի, (1896) Թիւ Ե:

29. **Տեր-Մկրտչեան Կարապետ եպիսկ.**, Պաղիկեանք Բիւզանդական կայսրութեան մէջ եւ մերձաւոր հերձուածային երեւոյթներ Հայաստանի մէջ, Երուսաղեմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1938:

30. **Տեր-Ներսեսյան Ս.**, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975:

31. **Օրմանեան Սաղաքիա եպիսկոս**, Ազգապատում, Մայր աթոռ Ս. Էջմիածին, Հատոր Ա, 2001:

32. **Акопян А. А.**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.

33. **Бартикян Р.**, Источники изучения павликианского движения, Ер., 1961.

34. **Луконин В.**, Древний и раннесредневековый Иран, М., 1987.

35. **Острогорский Г. А.**, Соединение вопроса в св. иконах с христологической догматикой в сочинениях православных апологетов раннего периода иконоборчества, Seminarium Kondakovianum. I. Praga, 1927.

36. **Пигулевская Н. В.**, Византия и Иран на рубеже VI и VII вв., М.-Л., 1946.

37. **Esbroeck M. Van**, L'encyclique de Komitas et la réponse de Mar Maroutha (617), Oriens Christianus, 85, p. 162-175.

38. **Johann Friedrich**, Der ursprüngliche bei Georgios Monachos nur theilweise erhaltene Bericht über die Paulikianer - Sitzungsberichte der philosophisch-philologische und historische Klasse der Bayerischen Akademie der Wissenschaften München, 1897.

39. **Michel le Syrien**, Chronique, II ed. Chabot, Paris, 1901.

40. Migne J.-P., *Patrologiae cursus completus. Series graeca*, t 98, Paris (Parisiis), 1865.

41. **Migne J.-P.**, *Patrologiae cursus completus. Series graeca*, vol. 94, Paris (Parisiis), 1864.

42. **Ostrogorsky G.**, *Studien zur Geschichte des byzantinischen Bilderstreites*, Breslau, 1929.

43. **Schmidt Andrea Barbara**, "Gab es einen armenischen Ikonoklasmus? Rekonstruktion eines Dokuments der kaukasisch-albanischen Theologiegeschichte." In *Das Frankfurter Konzil von 794: Kristallisationspunkt karolingischer Kultur Akten zweier Symposien* (vom 23. bis 27. Februar und vom 13. bis 15. Oktober 1994) anlässlich der 1200-Jahrfeier der Stadt Frankfurt am Main, II, edited by Rainer Berndt, Mainz, 1997, S. 955-962.

44. **Travaux et mémoires 4**, Centre de recherche d'histoire et civilisation de Byzance (Paris, France), 1970.

Անուշ Խաչատրյան
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ
anush.khachatryan@edu.isec.am

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ԿԱՆԱՅՔ ՄՈՆՂՈՒԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.
ՆՐԱՆՅ ԴԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՊԱՏԱԿ
ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ (13-14-ՐԴ ԴԴ.)**

Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Քրիստոնյա կանանց դերը մոնղոլական կայսրությունում, ինչպես նաև նրանց դերը և ազդեցությունը հպատակ ժողովուրդների նկատմամբ՝ մոնղոլ խաների վարած քաղաքականության մեջ 13-14-րդ դարերում և ընդհանրապես մոնղոլական աշխարհում՝ Pax Mongolica-ում¹:

Սորդաթթանի Բեկին և Ուրուկը այն ազդեցիկ մոնղոլական խաթուններից էին, ովքեր իրենց ամուսինների և որդիների՝ խաների սրտերն ուղղորդեցին իրենց երկրներում քրիստոնեական համայնքներին բարեհաճորեն ընդառաջելու և առաջ մղելու համար:

Մոնղոլական արքունիքում ազդեցիկ դեր և դիրք ունեցող քրիստոնյա այս կանայք ժամանակի ազդեցիկ կառավարիչների մայրերն ու կանայք էին: Խաթուններ, ովքեր հզոր քաղաքական

¹ Pax Mongolica լատիներենից թարգմանաբար նշանակում է «մոնղոլական խաղաղություն», նկարագրում է հարաբերական կայունության շրջանը Եվրասիայում Մոնղոլական կայսրության ներքո՝ 13-րդ և 14-րդ դարերում, երբ մոնղոլները երաշխավորում էին Ասիայի և Եվրոպայի միջազգային առևտրական ուղիների անվտանգությունը: Pax Mongolica-ն կայունության շրջան բերեց այն մարդկանց, ովքեր ապրում էին նվաճված տարածքներում և զբաղվում առևտրով: Նաև օգնեց ստեղծել միասնական վարչակազմ և մոնղոլական նվաճումներից հետո հարաբերական խաղաղության հիմք հանդիսացավ: Հաճախ հիշատակվում է նաև Pax Tatarica՝ «թաթարական խաղաղություն» ձևով, տես՝ **Jackson P.**, *The Mongols and the Islamic World, From Conquest to Conversion*, New Haven and London, 2017, p. 110.

դեր են խաղացել ոչ միայն ամուսինների կամ որդիների վարած քաղաքականության, այլ նաև նրանց ենթակա տիրությունների կրոնափոխության գործում՝ նպաստելով նաև Եվրոպայում քրիստոնեության տարածմանը: Նրանք աչքի էին ընկնում ոչ միայն իրենց անձնական, այլ նաև քաղաքական և հովանավորչական գործունեությամբ:

Տասներեքերորդ դարի վերջում հնչած տեսակետների համաձայն այս բարեպաշտ կանայք կարող էին վճռորոշ դեր կատարել Ասիայում: Արևմտյան եկեղեցին այս կանանց միջոցով՝ ինչպես վաղ եվրոպական քրիստոնյա թագուհիների, փորձում էր իր հարաբերությունները կարգավորել և պահպանել ազդեցությունը կայսրությունում՝ ողջ Եվրոպայում քրիստոնեություն տարածելու համար:

Թեմայի վերաբերյալ գրավոր աղբյուրներում առկա հիշատակումները բավականին սակավաթիվ են և քիչ հիշատակումներ կան այն բազմաթիվ քրիստոնյա կանանց մասին, ովքեր իրենց ազդեցությունն են ունեցել աշխարհի ամենամեծ և ամենահզոր կայսրություններից մեկում: Անգամ Եվրոպայից մոնղոլական կայսրություն հասած կաթոլիկ հոգևորականները իրենց զարմանքն էին արտահայտում, երբ պարզ էր դառնում որ խաներից շատերն ամուսնացած են եղել քրիստոնյա կանանց հետ, ովքեր բավականին մեծ ազդեցություն և իշխանություն են ունեցել:

Մոնղոլական խաների հանդուրժողական վերաբերմունքը Քրիստոնեության և քրիստոնյաների հանդեպ մեծապես կապվում էր ոչ միայն իրենց հստակ դավանանք չունենալու հանգամանքի հետ, այլ նաև նրա, թե ինչ դավանանք ունեն վերջիններիս կանայքը ու հաճախ հենց կանանց բարեխոսության արդյունք էլ համարվում էր խաների այդ հանդուրժողականությունը:

Ըստ Ջ. Ռյանի², վերոնշյալը հավաստում է նաև Մար Ռաբրան Բար Մաուման³, ով ուղարկվել էր տարբեր դիվանագիտա-

² James D. Ryan, Christian Wives of Mongol Khans: Tartar Queens and Missionary Expectations in Asia, Journal of the Royal Asiatic Society of Great Britain & Ireland, Vol. 8, Issue 03, November, 1998, p. 416.

կան առաքելություններով Հռոմ և վերջինս նույնպես խաների կողմից քրիստոնեության նկատմամբ հանդուրժողականությունը մեծապես կապում էր հենց իրենց կանանց բարեխոսության հետ:

Մոնղոլական կայսրությունում իշխող քրիստոնյա կանայք

Մոնղոլ կանայք շատ ավելի շատ իրավունքներ ունեին, քան տոհմացեղային մի շարք հասարակարգերում, հատկապես այն ժամանակ երբ տղամարդիկ հաճախ բացակայում էին, և նրանք էին պատասխանատու տան համար:

Ըստ պահպանված տեղեկությունների, աղբյուրներում հիշատակվում է նաև այն, որ Հռոմի պապ Նիկոլայ IV-ը նամակներ է ուղարկել մոնղոլական արքունիքներում գտնվող քրիստոնյա կանանց⁴, խրախուսելով շարունակել իրենց ծառայությունը Աստծուն: Այդ կանանց թվում էին օրինակ Էլեգագը և Ուոուկը՝ Արդուն խանի կանայք, և Նուկդանը՝ Աբաղայի կինը:

1. Սորղաթանի Բեկի

բեր են: Ամեն տարի նոյեմբերի 25-ը Իրանում նշվում է որպես Բասիջի կազմավորման օր¹⁴:

Բասիջի անդամներն ունեն մի շարք առավելություններ: Նրանք ազատվում են պարտադիր զինվորական ծառայությունից, բուհերում արտոնյալ ընդունելության իրավունք ունեն և ստանում են կրթաթոշակ: Բացի այդ, կազմակերպության անդամներն ավելի հավանական է, որ աշխատանքի անցնեն պետական մարմիններում: Կարելի է ասել, որ ընձեռնված հնարավորությունները ավելի մեծ հետաքրքրություն են առաջացնում երիտասարդների շրջանակներում:

Ղողս

Ի տարբերություն Բասիջի, որի հիմնական գործառույթը երկրի ներքին անվտանգությունն է, Ղողսը զբաղվում է Իրանի սահմաններից դուրս հատուկ գործողություններ իրականացնելով: Մինչ այժմ ստույգ թվեր չկան այս կազմավորման թվաքանակի մասին՝ ամենայն հավանականությամբ, խոսքը մի քանի տասնյակ հազար մարդու մասին է:

Այս կառույցը ներգրավված է եղել նաև մի շարք պատերազմներում մասնավորապես՝ Իրան-իրաքյան պատերազմում, Լիբանանում և Սիրիայում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմներում: Իրաքում կազմակերպել է հարձակումներ ամերիկյան ռազմաբազաների վրա և այլն:

Կառույցը հատկապես աչքի է ընկել Սիրիայում «Իսլամական պետություն» ահաբեկչական կազմակերպության դեմ պայքարում: 2020 թ. հունվարին ԱՄՆ կողմից կազմակերպվեց «Ղողս» հատուկ նշանակության ստորաբաժանման հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ղասեմի Սոլեյմանիի սպանությունը: Նա սպանվել է Իրաքում ամերիկյան անօդաչու թռչող սարքի հարվածից¹⁵: ԱՄՆ զինված ուժերը հայտարարել են, որ այս գործողու-

¹⁴ День Басиджа в Иране, <https://rus.team/holidays/den-basidzha-v-irane>, հղվել է՝ 10.12.2022

¹⁵ Տես, նույն տեղում:

թյան նպատակն է եղել կանխելու Սոյելմանիի կողմից կազմակերպվող և ԱՄՆ-ի շահերին հակասող գործողությունները¹⁶:

Նշենք որ 1979 թվականից ի վեր ԱՄՆ-ն մեղադրում է «Ղոդս»-ին ահաբեկչական կազմակերպություններին աջակցելու և՛ Իրաքում, և՛ Մերձավոր Արևելքի այլ երկրներում հարձակումների իրականացնելու մեջ, որոնք հանգեցրել են հարյուրավոր ամերիկացիների մահվան¹⁷:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը ուժեր ուղարկեց այնտեղ մարզելու տեղական զինյալներին՝ ի պատասխան 1982 թվականին Իսրայելի ներխուժմանը Լիբանան: Այս իրադարձությունների ընթացքում Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի աջակցությամբ ստեղծվեց «Հեզբոլլահ» շարժումը, որը ղեկավարում էր տեղի բնակչության պայքարը հարավային Լիբանանում իսրայելական ռազմական ներկայության դեմ¹⁸: Հեզբոլլահ շարժումը կարողացել է դառնալ Լիբանանի ամենաազդեցիկ քաղաքական ուժերից մեկը, իսկ նրա առաջնորդ Հասան Նասրալլան մշտապես ընդգծում է իր կապը Իրանի հետ¹⁹:

«Ղոդս»-ում գործում են մի շարք վարչություններ, որոնք գործում են տարբեր աշխարհագրական ուղղություններով, այդ թվում Արաբական թերակղզու, Հյուսիսային Աֆրիկայի, Թուրքի-

¹⁶ Пентагон объявил об убийстве генерала КСИР при обстрелах Багдада, <https://rg.ru/2020/01/03/pentagon-zaiavil-ob-ubijstve-general-a-ksir-pri-obstrele-bagdada.html> 03.01.2020

¹⁷ What is Iran's secretive Quds Force? <https://www.nbcnews.com/news/world/who-are-iran-s-secretive-quds-forces-n1110156> 04.01.2020.

¹⁸ Шемет Г.И., Корпус стражей исламской революции: современное состояние и структура, <https://iran1979.ru/shemet-g-i-korpus-strazhej-islamskoj-revoljucii-sovremennoe-sostoyanie-i-struktura/>, 10.11.2020

¹⁹ Полонский И., На страже Исламской революции: КСИР и его роль в жизни Ирана. <https://topwar.ru/148084-na-strazhe-islamskoj-revoljucii-ksir-i-ego-rol-v-zhizni-irana.html>, 10.10.2018

այի, Հնդկաստանի, Պակիստանի, Աֆղանստանի, Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի, ԱՄՆ-ի և Եվրոպայի²⁰:

Այսպիսով, «Ղողս» ստորաբաժանում Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ռազմաքաղաքական էլիտար հատուկ ստորաբաժանումը իր ստեղծման առաջին իսկ օրվանից ակտիվորեն մասնակցում է Իրանի կողմից իրականացվող բոլոր ռազմական գործողություններին և իրանական բազմաթիվ գաղտնի գործողություններին:

ԻՀՊԿ-Ի քաղաքական ազդեցությունը

Ժամանակի ընթացքում ԻՀՊԿ-ը սկսեց նաև քաղաքական և տնտեսական ազդեցություն ձեռք բերել երկրի ներսում, և հաջողվեց դառնալ երկրի ամենաազդեցիկ կառույցներից մեկը՝ գերագույն առաջնորդի ինստիտուտից հետո: Դրա հետ կապված տարբեր ժամանակահատվածներում Իրանի նախկին նախագահներ Հաշեմի Ռաֆսանջանին, Մոհամադ Խաթամին, Հասան Ռոուհանին, փորձել են թուլացնել այդ կառույցի ազդեցությունը, սակայն դա վերջնական արդյունքում չի հաջողվել, քանի որ «Հեղափոխության պահապանների կորպուսը» դարձել է երկրի Գերագույն առաջնորդ Ալի Խամենեիի դաշնակիցը և հենարանը: Հենց այդ պատճառով էլ գրեթե անսահմանափակ իշխանությամբ օժտված երկրի Գերագույն առաջնորդը սատարում է ԻՀՊԿ-ին:

Կորպուսի «ոսկեդարը» համարվում է Իրանի նախկին նախագահ Մահմուդ Ահմադինեժադի կառավարման տարիները: Վերջինս նախկինում եղել է ԻՀՊԿ անդամ և նախագահ դառնալուց հետո սկսեց լայն արտոնություններ տալ այդ կառույցին: Նրա կարիքների անդամների մեծ մասը, ինչպես նաև 2004 թ. Իրանի Մեջլիսի պատգամավորների գրեթե մեկ երրորդը կորպուսի անդամներ էին: Բացի այդ Ահմադինեժադն այդ կառույցի շատ անդամների նշանակեց դեսպաններ, նահանգապետեր և այլ բարձր պաշտոններում: Բացի պաշտոններ ստանալուց Մահմուդ

²⁰ **Ղարբինյան Վ.**, Իրանի իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը, <https://azg.am/am/2022012118/> 21.01.2022.

Ահմադինեժադի կառավարման տարիներին Կորպուսը առավել ամրապնդեց իր տնտեսական հզորությունը²¹:

Այսպիսով, Իսլամական հեղափոխության արդյունքում ստեղծված ներքաղաքական ծանր իրավիճակն անհրաժեշտություն առաջացրեց ստեղծել «Իսլամական հեղափոխության պահապանների կորպուս»-ը: Ուսումնասիրելով նրա ակտիվ գործունեությունը կարելի է եզրակացնել, որ վատ զինված ջոկատներից ժամանակի ընթացքում այն վերածվեց մի հզոր կառույցի: Կորպուսը իր ակտիվ մասնակցությունն է ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության անվտանգության համար գրեթե բոլոր գործողություններում:

Այժմ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը հիմնականում լավ պատրաստված զինվորականներից է բաղկացած, որոնք, որպես կանոն, մարտական փորձ են անցել Իրաքում, Լիբանանում, Պաղեստինում, Աֆղանստանում և Միլիայում: Ըստ Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության, պաշտպանում է երկրի սահմանները և պահպանում ներքին կարգը, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը կոչված է պաշտպանելու Իսլամական Հանրապետության քաղաքական համակարգը երկրում և կանխելու օտարերկրյա միջամտության փորձերը: Կորպուսի անդամներից շատերը զբաղեցնում են պաշտոններ տարբեր պետական մարմիններում: Ներկայումս Իրանի Իսլամական Հանրապետության Զինված ուժերը, որոնց մեջ վճռորոշ դեր ունի ԻՀՊԿ-ը, համարվում է Մերձավոր և Միջին Արևելքի թվով ամենամեծ զինված ուժերից մեկը: Կարևոր է նշել նաև, որ ԻՀՊԿ-ը ունենալով մեծ կարևորություն Իրանի Իսլամական Հանրապետության համար, մի քանի երկրների կողմից ճանաչվել է որպես ահաբեկչական կազմակերպություն: Պատճառաբանելով, որ իսլամական հեղափոխության պահապանների կորպուսն աջակցում և ֆինանսավորում է ահաբեկչական կազմակերպություններին: Սակայն ըն-

²¹ Վարդանյան Ա., Իսլամական հեղափոխության պահապանների տեղն ու դերն Իրանի քաղաքական համակարգում, <https://hetq.am/hy/article/116271> 22.04.2022

դունելի է նաև Իրանի դիրքորշումը, քանի որ ԻՊՀԿ-ը համարվում է երկրի անվտանգության ամենակարևոր երաշխիքներից մեկը:

Կարելի է ասել, որ այսօր ԻՊՀԿ-ն գործում է որպես ընդարձակ սոցիալ-քաղաքական կառույց, որի ազդեցությունը տարածվում է Իրանի քաղաքական և հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա: Կարելի է շեշտել նաև, որ այն այսօր Իրանի Իսլամական Հանրապետության պետականության հենարանն է, այն պետություն է պետության մեջ:

Anna Isakhanyan
Artsakh Scientific Center
annaiskhanyan99@gmail.com

THE ROLE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN IRAN'S POLITICAL SYSTEM

The complex political situation created by the Islamic Revolution provided the basis for the creation of the Islamic Revolutionary Guard Corps (IRGC). The Islamic Revolutionary Guard Corps supplements regular Armed Forces by performing functions outside the traditional role of the army, operating separately, and carrying out various operational tasks. The research into this organization indicates that the IRGC that mainly carried out the security of the Khomeini groups has become a powerful structure. It could be said that today the IRGC functions as a broad socio-political and economic institution whose influence extends to all aspects of Iran's political and social life. Today, the Islamic Revolutionary Guard Corps is also a corporate unit of Iran's military, intelligence, political, political, ideological, as well as financial and economic institutions. It can also be emphasized that this powerful structure is the backbone of the Islamic Republic of Iran today. According to Ayatollah Montazeri, one of Iran's most influential figures, the Islamic Revolutionary Guard Corps is the child of the revolution and is the only body in its kind that has broad religious, political, and military powers.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Բաղդասարյան Մ.**, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) ստեղծումը և նրա դերը Իրանի զինված ուժերի համակարգում, Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Երևան, 2009, էջ 47-51:
2. **Վարդանյան Ա.**, Իսլամական հեղափոխության պահապանների տեղն ու դերն Իրանի քաղաքական համակարգում, <https://hetq.am/hy/article/116271> 22.04.2020
3. **Полонский И.**, На страже Исламской революции: КСИР и его роль в жизни Ирана. <https://topwar.ru/148084-na-strazhe-islamskoj-revoljucii-ksir-i-ego-rol-v-zhizni-irana.html> 10.10.2018
4. **Шестаков А. П.**, Создание духовенством Корпуса стражей исламской революции как инструмента борьбы за безраздельное политическое господство. Иранская революция 1978-1979: причины и уроки, Москва, "Наука", 1989, с. 163-171.
5. **Шемет Г.И.**, Корпус стражей исламской революции: современное состояние и структура https://iran1979.ru/wpcontent/uploads/2020/11/shemet_gi_korpus_strazhei_islamskoi_revoliutsii_sovremennoe_compressed.pdf?fbclid=IwAR0zjHUmYgl2qTK8ke4tv_42ny7KLI1pJEDQAUSChbaIYPupCL5qT9QDcLM 10.12.2022
6. U.S. designates elite Iranian force as terrorist organization <https://www.reuters.com/article/uk-usa-iran/u-s-designates-elite-iranian-force-as-terrorist-organization-idUSKCN1RKN1NQ> 08.04.2019
7. США объявили иранский Корпус стражей исламской революции террористической организацией <https://www.bbc.com/russian/news-47859074>; <https://fa.wikishia.net/view/> 08.04.2019
8. The Basij Resistance Force <https://iranprimer.usip.org/resource/basij-resistance-force> 06.10.2010
9. При ракетном обстреле аэропорта Багдада погиб иранский генерал <https://rg.ru/2020/01/03/pentagon-zaiavil-ob-ubijstve-generalaksir-pri-obstrele-bagdada.html> 03.01.2020
10. What is Iran's secretive Quds Force?<https://www.nbcnews.com/news/world/who-are-iran-s-secretive-quds-forces-n1110156> 01.03.2020
11. КСИР — это национальная армия, и никакая национальная армия не может быть названа террористической <https://iran.ru/news/>

politics/120110/KSIR_eto_nacionalnaya_armiya_i_nikakaya_nacionalnaya_armiya_ne_mozhet_byt_nazvana_terroristicheskoy 29.03.2022

12. День Басиджа в Иране <https://rus.team/holidays/den-basidzha-v-irane> 10.12.2022

13. День корпуса стражей исламской революции в Иране <https://rus.team/holidays/den-korpusa-strazhey-islamskoy-revolyucii-v-irane> 10.11.2022

Աննա Անտոնյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

antonyananna235@gmail.com

**ԵԳԻՊՏՈՍԻ ՂՊՏԻՆԵՐԸ 2011Թ.-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
(ՓԵՏՐՎԱՐ 11, 2011 - 30 ՀՈՒՆԻՍ, 2012)**

2011 թ. առաջին կեսին մի քանի արաբական երկրներում՝ Թունիսում, Եգիպտոսում, Լիբիայում, Եմենում բռնկվեց համա-
րաբական հուժկու հեղափոխական ալիք, որն, ի վերջո, հանգեց-
նելու էր տարիներով իշխանության դեկիմ գտնվող վարչակարգե-
րի տապալմանը: «Արաբական գարնան» հիմքում ընկած էին մի
շարք սոցիալ-տնտեսական, քաղաքական և մարդու իրավունքնե-
րի ոտնահարմանն առնչվող հիմնախնդիրներ, որոնք այդպես էլ
իրենց վերջնական լուծումը չգտան հեղափոխության հաղթանա-
կից հետո:

Հետաքրքրություն է առաջացնում այն փաստը, որ «արաբա-
կան գարնան» շարժումները չունեին քաղաքական առաջնորդներ
կամ ղեկավարող քաղաքական կուսակցություններ, ինչպես նաև
մշակված ծրագրային հայեցակարգեր: Հակակառավարական
շարժումներն ավելի շատ ծավալվեցին քաղաքացիական ակտի-
վիստների առաջնորդությամբ և տեղեկատվական ռեսուրսների
կիրառմամբ¹:

Սույն հոդվածում համակողմանիորեն կդիտարկենք Եգիպ-
տոսի բնիկների, միևնույն ժամանակ Մերձավոր Արևելքի ամե-
նամեծ քրիստոնեկան համայնքի ներկայացուցիչների՝ դպտինե-

¹ **Հովհաննիսյան Ն., Գևորգյան Գ.**, «Արաբական գարունը» Համաարաբական
ըմբոստությունը հանուն արաբական հասարակության արդիականացման
(Թունիս, Եգիպտոս, Եմեն, Լիբիա), Երևան, 2018, էջ 9:

րի² (տարբեր տվյալներով կազմում են Եգիպտոսի բնակչության 5- 10 %)՝, մասնակցությունը 2011 թ. Եգիպտոսում ծավալված համազգային ապստամբությանը, որը հանգեցրեց երկրի երկարամյա նախագահ Հոսնի Մուբարաքի (1981-2011թթ.) հրաժարականին, ինչպես նաև ցույց կտանք այդ գործընթացների ազդեցությունը ղպտիների վրա արաբական գարնանը հաջորդած՝ Բարձրագույն զինվորական խորհրդի կառավարման շրջանում:

Արաբական աշխարհի առանցքային երկրներից Եգիպտոսն անմասն չմնաց և ականատես եղավ «արաբական գարնանը»՝ իր բոլոր դրական և բացասական հետևանքներով: Չնայած այն հանգամանքին, որ գրեթե ամենուր «արաբական գարունն» ընթանում էր նույն սցենարով, այնուամենայնիվ, Եգիպտոսի պարագայում կային ակնհայտ տարբերություններ: Մասնավորապես, հիշատակության է արժանի Եգիպտոսի բնիկների՝ ղպտիների, ակտիվ մասնակցությունն «արաբական գարնան» շրջանակներում տեղի ունեցած 2011 թ. հունվարի 25-ի հեղափոխությանը:

Հարկ է նշել, որ Եգիպտոսում «արաբական գարնանը» նախորդած շրջանում Եգիպտոսում սրվել էր ղպտիների և մուսուլմանների միջև հարաբերությունները ինչը Եգիպտոսում կրոնադավանական «փխրուն» համակեցության ներքին հավասարակշռության խախտման հետևանք էր:

Լարված հարաբերությունների մասին է վկայում այն փաստը, որ 2011 թ. հունվարի 1-ին Ամանորի կեսգիշերին Ալեքսանդ-

² Ղպտի բառը ծագում է հունարեն Αίγυπτος բառից, որը Եգիպտոսի բնիկների անվանումն էր հունական աղբյուրներում: Արաբների կողմից Եգիպտոսի նվաճումից հետո ղպտիները սկսեցին կոչվել բնիկ եգիպտացիներ, հետագայում՝ եգիպտացի քրիստոնյաներ: Ղպտիական ամենամեծ համայնքները պահպանվել են Վերին Եգիպտոսում, Կահիրեում, Ալեքսանդրիայում: Մոտ 0,5-1 միլիոն մարդ ապրում է ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Քուվեյթում, Մեծ Բրիտանիայում, Կանադայում: Նրանք խոսում են արաբերեն և նրանց ճնշող մեծամասնությունը պատկանում է Ղպտի ուղղափառ եկեղեցուն: Ղպտիների նույնականացման արտաքին խորհրդանիշներն են հատուկ անուններն ու աջ թևի վրա խաչի տեսքով դաջվածքը: (Մանրամասն տե՛ս **Кобищанов Т.**, Большая российская энциклопедия 2004- 2007) [https://old.bigenc.ru/ethnology/text/2095541\(28.01.2011\)](https://old.bigenc.ru/ethnology/text/2095541(28.01.2011))

³ **McLaurin R.**, The Political Role of Minority Groups in the Middle East, New York, 1979, p. 270.

րիայի ալ- Կիդդիսայն կոչվող եկեղեցու մոտ տեղի ունեցավ դպտիների դեմ ուղղված ահաբեկչություն, որի ժամանակ իրեն պայթեցրած մուսուլման մահապարտ-ահաբեկիչը նախապես մտադրվել է ինքն իրեն պայթեցնել եկեղեցու ներսում, սակայն եկեղեցու դիմաց կանգնած անվտանգության աշխատակիցները թույլ չեն տվել նրան եկեղեցի մտնել: Պայթյունի հետևանքով զոհերի թիվը հասնում էր 23-ի⁴:

Եկեղեցու ռմբակոծման փաստը հուզումներ և դժգոհություններ առաջացրեց երկրի թե՛ քրիստոնյաների և թե՛ չափավոր մուսուլմանների շրջանում: Եկեղեցու ռմբակոծությունը կարծես նորից առաջ բերեց Եգիպտոսում վաղուց մոռացված ազգային միասնության գաղափարը:

Ալեքսանդրիայում եկեղեցու ռմբակոծությունից հետո տարբեր արձագանքներ եղան, բազմաթիվ հասարակական գործիչներ վերահաստատեցին ազգային միասնության արմատացած կարգախոսները՝ հղում կատարելով Եգիպտոսում մուսուլման-քրիստոնյա համակեցության և հանդուրժողականության պատմությանը: Հետևաբար, 2011 թ.փետրվարի 11-ին երկրի նախագահ Հոսնի Մուբարաքի տապալմանը նախորդած բողոքի 18-օրյա շրջանի ամենահուսադրող տեսարաններից մեկը միասնության դրսևորումն էր: Եգիպտոսի տարբեր կրոնական համայնքների ներկայացուցիչներ և ցուցարարներ ցույցերի ժամանակ հաճախ էին օգտագործում «Մուսուլման թե քրիստոնյա, մենք բոլորս եգիպտացի ենք» կարգախոսը⁵:

Հեղափոխության առաջին օրերին դպտի ուղղափառ եկեղեցին կոչ էր անում դպտիներին չմասնակցել համազգային ըմբոստություններին, իսկ դպտի պատրիարքն աջակցում էր Հոսնի-Մուբարաքին: Պատրիարքի նմանօրինակ աջակցությունը բացատրվում էր այն հանգամանքով, որ դեռ նախորդ դարի 80-

⁴ "Al-īntihārī kān yuḥaṭiṭ al-tafḡīr nafsahu dāhīl kanīsāṭ "Al-qiddīsayn", FRANCE 24, 05. 01. 2011
<https://www.france24.com/ar/20110105-egypt-victims-kamikaze-attack-quaeda-copts> (28.01.2023)

⁵ **Monier E.**, The Arab Spring and Coptic–Muslim Relations: from Mubarak to the Muslim Brotherhood, European Yearbook of Minority Issues, vol. 11, 2012, p. 169.

ականներից պետության և եկեղեցու միջև գոյություն ունեւ դաշինք, որն իր կենսունակությունը պահպանեց մոտ երեսուն տարի:

Եկեղեցու և պետության միջև դաշինքը նշանավորվում էր ազգային քաղաքականության ոլորտում փոխադարձ աջակցությամբ և համագործակցությամբ՝ հիմնվելով այն բանի վրա, որ եկեղեցու ղեկավարությունը ներկայացնում է ղպտիներին եգիպտական հասարակական և քաղաքական կյանքում⁶:

2011 թ. հեղափոխությունն աչքի էր ընկնում լիբերալ, սոցիալիստական և իսլամական ուժերի աննախադեպ միասնությամբ, ինչը հնարավորություն տվեց վերջ դնել Հոսնի Մուբարաքի երեսունամյա իշխանությանը: Հաջողվեց համախմբել երիտասարդությանը՝ սոցիալական ցանցերի լայն օգտագործմամբ և դրանով իսկ փորձ արվեց փոխել գոյություն ունեցող քաղաքական մշակույթը: Այսպիսով, ղպտիները փողոցային պայքարից դուրս ակտիվորեն ներգրավված էին նաև սոցիալական ցանցերում և էլ. հարթակներում:

Չնայած մուբարաքյան վարչակարգի բոլոր ջանքերին՝ հետ պահելու ղպտիներին հեղափոխությանը մասնակցելուց, նրանք աջակցում էին բացեիբաց և մեծ ոգևորությամբ: Հեղափոխության հաղթանակի մեջ նրանք տեսնում էին ապագա լիբերալ Եգիպտոսը, որը լինելու էր բոլոր եգիպտացիներինը, և որում ղպտիները կարող էին վայելել «լիարժեք քաղաքացիներ լինելու իրավունքը»⁷:

Հակամուբարաքյան ցույցերին մասնակցող ղպտիներից էր նեոլիբերալ «Վաֆդ» կուսակցության առաջատար ղեմքերից Մունիր Ֆախրի Աբդ ալ-Նուրն, ով հետագայում զբաղեցրեց զբոսաշրջության նախարարի պաշտոնը Մուբարաքի տապալումից հետո ձևավորված անցումային կառավարությունում: Յույցերի

⁶ Նույն տեղում, էջ 171:

⁷ Rowe P., Democracy and Disillusionment: Copts and the Arab Spring, Langley, 2014, p. 237.

ակտիվ մասնակիցներից էր նաև Ժորժ Իսահակը, ով «Քիֆայա»⁸ շարժման առաջնորդն էր⁹:

Հասկանալի է, որ հունվարյան իրադարձությունների ակտիվորեն մասնակցում էին նաև դպտի կանայք: Բազմաթիվ կանայք ամբողջ գիշերն անց էին կացնում Թահրիր հրապարակում: Հարկ է նշել, որ այդ ընթացքում որևէ տիպի սեռական բռնություն չի եղել նրանց նկատմամբ, չնայած, որ նախկինում նմանատիպ հավաքների ժամանակ բռնություններ հաճախ են տեղի ունեցել¹⁰:

Մինչ դպտիների մի հոծ զանգված հեղափոխությունը դիտում էր իբրև եգիպտական հասարակության կառուցվածքը փոխելու և սեփական քաղաքացիական իրավունքները իրացնելու կարևոր հնարավորություն, դպտիների մեկ այլ զանգված ավելի պահպանողական էր փոփոխությունների վերաբերյալ իրենց տեսակետներում՝ կողմնակից լինելով նախկին ռեժիմի վերականգնմանը՝ ավելի ազատականացված տարբերակով: Ի վերջո, Եգիպտոսում ժողովրդավարական կարգերի ներդրումը հանգեցրեց դպտի լիբերալ ակտիվիստների մեծ հիասթափությանը և հաղթանակ ապահովեց պահպանողականների համար¹¹:

Հեղափոխությունը սկսվելուն պես, դպտի երիտասարդության մասնակցությունը ստիպեց դպտիական եկեղեցիներին ընդունել բողոքի ցույցերին դպտիների մասնակցության իրավունքը, իսկ դպտիական ուղղափառ և բողոքական ավետարանչական (Ինգիլի) եկեղեցիները հրապարակում մատուցեցին հանրային աղոթքներ և եկեղեցական ծառայություններ¹²:

⁸ Եգիպտական շարժում՝ հանուն փոփոխությունների (*Քիֆայա* արաբերենից թարգմանաբար նշանակում է բավական է) եգիպտական տարբեր քաղաքական ուժերի ազատ խմբավորում է, որն իր ստեղծման օրվանից նպատակ է ունեցել նոր իրավակարգություն հաստատել Եգիպտոսում՝ Հոսնի Մուբարաքի վարչակարգի տապալվելուց հետո:

⁹ **Желтов В., Желтов М.**, Религия и арабская весна, Вестник КемГУ, N 2 (50), 2012, с. 95.

¹⁰ **Նույն տեղում**, էջ 93:

¹¹ **Rowe P.**, նշվ. աշխ., էջ 238:

¹² **Նույն տեղում**, էջ 240:

Ինչպես գրում է anilnetto.com կայքը. «Եզիպտոսի մայրաքաղաք Կահիրեի կենտրոնական Թահրիր (Ազատության) հրապարակում այսօր տեղի կունենա քրիստոնեական պատարագ: Պատարագն իրականացնելու է ղպտիական համայնքը, որի նպատակն է հերքել այն լուրերը, թե երկրի նախագահ Հոսնի Մուբարաքի դեմ ցույցերը միայն «Մուսուլման եղբայրներ» կուսակցության նախաձեռնությունն են, և այդ ցույցերին աջակցում են միայն մուսուլմանները: Ղպտիական համայնքի ներկայացուցիչներն ակտիվորեն մասնակցում են արդեն երրորդ շաբաթն անցկացվող հակակառավարական ցույցերին: Ինչպես հաղորդում են արևմտյան լրատվամիջոցները, հակակառավարական ցույցերի ողջ ընթացքում հենց ղպտիական համայնքի ներկայացուցիչներն են պաշտպանել մզկիթների և հրապարակների սահմանները մուսուլմանական ուրբաթօրյա աղոթքների ժամանակ¹³:

Սակայն ղպտիական եկեղեցին, նախքան այս քայլին գնալը, երկարատև դիմադրություն էր ցուցաբերում հակամուբարաքյան շարժման մեջ ընդգրկված ղպտիների նկատմամբ:

Ինչպես նկատում է հետազոտող Ահմադ Տահան. «Եկեղեցու մենիշխանությունը ղպտիական խնդրի վերաբերյալ հոգևոր և քաղաքական իմաստով մեծ վնաս է հասցնում ղպտիների քաղաքացիության սկզբունքին, որը հիմնված է քաղաքացիների միջև առանց խտրականության հավասարության և օրենքի գերակայության վրա: Իսկ եկեղեցու մենատիրությունը ղպտիների շահերը ներկայացնելիս ավելի է մեկուսացնում նրանց՝ խորացնելով միջկրոնական հակասությունները: Իրականությունն այն է, որ մի քանի տասնամյակ շարունակ Եզիպտոսում ազգային գաղափարախոսության բացակայությունը թուլացրեց հասարակությունը՝ նպաստելով բազմաթիվ բևեռների ի հայտ գալուն, որոնք ներառում են կրոնական, քաղաքական, տարածաշրջանային և մասնագիտական բևեռացման բոլոր տեսակները: Հունվարի 25-ն իդեալական հնարավորություն էր ընձեռում ղպտիներին՝ ազատվե-

¹³ Muslim- Christian solidarity in Tahrir, anilnetto.com, 06. 02. 2011, <https://anilnetto.com/religion-and-ethnicity/christianity/muslim-christian-solidarity-in-tahrir-sq/> (28.01.2023)

լու եկեղեցու ազդեցությունից և հանրային տիրույթում Եզիպտոսի քաղաքացի դրսևորվելու՝ արտահայտելով իրենց տեսակետները և պահանջելով իրենց քաղաքացիական և սոցիալական իրավունքները, սակայն առաջնորդող աշխարհիկ այլ կառույցներ չունենալով կրկին վերադառնում էին եկեղեցու գիրկը»¹⁴:

Ի վերջո, 2011 թ. փետրվարի 11- ին 1981 թ. -ից երկրի նախագահի պաշտոնը զբաղեցնող Հոսնի Մուբարաքը հրաժարական տվեց՝ ժողովրդական հուժկու ճնշման պայմաններում, իսկ իշխանությունը փետրվարի 13- ին անցավ Զինված ուժերի բարձրագույն խորհրդին՝ գեներալ Հուսեյն Տանտավիի գլխավորությամբ¹⁵:

Հարկ է նշել, որ Հոսնի Մուբարաքի տապալումից հետո ղպտիների կացությունը չբարելավվեց, այլ միայնց հաջորդող կառավարությունների հաջորդական փոփոխությունների և իսլամական արմատականության ալիքի տարածման պայմաններում ղպտիների զգալի հատվածն արտագաղթեց երկրից:

Հունվարյան հեղափոխությանը հաջորդած անցումային կառավարության ժամանակաշրջանում ղպտիներն ակտիվորեն ներգրավված էին եղել մի շարք քաղաքական կուսակցությունների հիմնադրման մեջ, որոնցից հատկապես նշանակալից է «Ազատ Եզիպտացիներ» կուսակցությունը¹⁶, որի համահիմնադիրներից էր Օրասքոմ Տելեկոմ ընկերության հիմնադիր, գործարար Նազիբ Սավիրիսը՝ Եզիպտոսի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության այլ անդամների հետ միասին:

Անցումային կառավարության շրջանում ղպտիների համար թերևս ամենահիասթափեցնող դրվագներից էր 2011 թ. Զինված ուժերի գերագույն խորհրդի որոշումը՝ մի շարք սահմանադրական փոփոխություններանց կացնելու վերաբերյալ, որոնք պետք

¹⁴ Taha A., Kif nafham 'laqa'at al-'aqbat bil daulat al-Maṣriya ? Maḥtāt al-'laqa'at bin al-kanisa wāl siyāsat fi Miṣr, 18.02.2015; <http://surl.li/epimp> (28.01.2023)

¹⁵ **Հովհաննիսյան Ն., Գևորգյան Գ.**, նշվ. աշխ., էջ 92:

¹⁶ "Ḥizb al-miṣryin al-'ahrār", Marefa.org https://www.marefa.org/%D8%AD%D8%B2%D8%A8_%D8%A7%D9%84%D9%85%D8%B5%D8%B1%D9%8A%D9%8A%D9%86_%D8%A7%D9%84%D8%A3%D8%AD%D8%B1%D8%A7%D8%B1 (հասանելի է 28.01.2023-ի դրությամբ)

է ընդունվելին համազգային հանրաքվեի արդյունքում: Այդ փոփոխություններն առնչվում էին նաև նախագահական ընտրությունների անցկացման ժամկետների հետ և ճանապարհ էին հարթելու նույն տարվա վերջին անցկացվելիք ընտրությունների համար: Նոր ընտրություններ անցկացնելու հեռանկարը մինչև վերոնշյալ սահմանադրական փոփոխությունների ընդունումը անհանգստացնում էր լիբերալ քաղաքական գործիչներին և ղպտիների մեծամասնությանը¹⁷: 2011 թ. մարտի 19-ին հանրաքվեի արդյունքում ստացված ձայների 77%-ը թույլ էր տալիս սահմանադրական փոփոխություններ իրականացնել: Հետագոտությունները ցույց են տալիս, որ ղպտիների մեծ մասը դեմ էր քվեարկել սահմանադրական փոփոխություններին¹⁸ :

Հունվարյան հեղափոխությունից հետո ղպտիները հույս ունեին, որ ավելի շատ ներկայացվածություն կունենային տեղական ինքնակառավարման և նահանգային մարմիններում, քան ունեին Հոսնի Մուբարաքի օրոք: Սակայն այստեղ էլ ղպտիների սպասումները չարդարացան: Ինչպես նշում է Եգիպտոսում հայ համայնքի ակտիվ ներկայացուցիչներից Նաթիլ Գաբրիելը. «Հայ առաքելական եկեղեցին օրերս հանդես է եկել ի պաշտպանություն ղպտիների պահանջի՝ վերականգնել Մուբարաքի օրոք եղած կանոնը, երբ 11 նահանգապետերից 3-ը ղպտիներ էին: Այժմ ղպտիներն իշխանության մեջ որևէ կերպ ներկայացված չեն, և դա մտահոգում է ոչ միայն Հայ Եկեղեցուն, այլև՝ Վատիկանին, Ռուս ուղղափառ, Անգլիկան և Հույն ուղղափառ եկեղեցիներին»¹⁹:

Դեռ Հոսնի Մուբարաքի օրոք ղպտիները բազմաթիվ դժվարությունների էին բախվում եկեղեցիների կառուցման, վերակառուցման և անգամ եկեղեցու ներսում առանձին հատվածների վերանորոգման ժամանակ: Նմանատիպ գործողություններ կատա-

¹⁷ Գարծում ենք, ղպտիներն արդեն հասկացել էին, որ հեղափոխության հիմնական շահառուն երկրի իսլամիստական ուժերն են:

¹⁸ **Hulsman C.**, The Sharia as the Main Source of Legislation? The Egyptian Debate on Article II of the Egyptian Constitution, Marbur, 2012, p. 106.

¹⁹ Եգիպտոսի գրոհայինների թիրախում հայ-ղպտիական ընտանիքներն են, tert.am, 29.01.2011, <https://www.tert.am/am/news/2011/09/29/egipt/357994> (հասանելի է 28.01.2011-ի դրությամբ)

րելու համար պետք է դպտիական եկեղեցին թույլտվություն վերցնեք երկրի իշխանություններից:

Հեղափոխությունից հետո դպտիների մոտ ցանկություն առաջացավ փորձարկել իրենց նոր ազատությունների սահմանները, որոշ դեպքերում՝ եկեղեցիներ էին վերակառուցում, որոնք երկար ժամանակ անտեսված էին եղել նախկին սահմանափակումների պատճառով: Այս և նմանատիպ այլ նախաձեռնությունները հանգեցրին մի շարք վայրերում միջկրոնական բախումների, որոնք լայնորեն լուսաբանվեցին 2011 թ. կեսերին²⁰:

Այդ միջադեպերից էր 2011 թ. մայիսի 7-ին ԿահիրեիԻմբաբա արվարձանում գտնվող Սուրբ Մենա եկեղեցու վրա հարձակումը: Այդ օրը կեսօրվա աղոթքից հետո մոտավորապես ժամը 16:00-ին, Իմամ Մուհամմադ Ջուդբին 150-200 զինված մուսուլմաններին առաջնորդել էր դեպի Սուրբ Մինա եկեղեցի: Այստեղ իմամը եկեղեցու ծառայողներից պահանջել էր մի քրիստոնյա դպտի կնոջ՝ Կամիլա Շեհատային, ով ըստ շրջանառվող լուրերի, իսլամ էր ընդունել և կնոջ հարազատները, դեմ լինելով նրա որոշմանը, Կամիլային պահել էին եկեղեցում: Իրականում, այս լուրերը չէին համապատասխանում իրականությանը, պարզապես կինը, գտնվելով ամուսնու հետ, ով նույն եկեղեցում հոգևոր ծառայության մեջ էր, հեռացել էր տնից: Մուհամմադ Ջուդբին եկել էր պահանջելու իբր «կրոնափոխ» եղած կնոջը: Իրականում թե՛ իսլամական և թե՛ դպտիական աղբյուրները կարծում են, որ այս լուրերը լիովին անհիմն էին, և սա միայն ծառայել է իբրև պատրվակ՝ ծայրահեղական մուսուլմանների կողմից բախումներ հրահրելու համար: Եվ, իսկապես եկեղեցում սկսվեց փոխհրաձգություն, որի արդյունքում զոհվում է 10 դպտի, իսկ վիրավորների թիվը հասնում է մոտ 200-ի²¹:

²⁰ Rowe P., նշվ. աշխ., էջ 240:

²¹ Casper J., Attack on St. Mina Church in Imbaba, Cairo, Sympathetic Reporting on the Middle East, 08.05.2011

[https://jaysoncasper.com/2011/05/08/attack-on-st-mina-church-in-imbaba-cairo/\(28.01.2011\)](https://jaysoncasper.com/2011/05/08/attack-on-st-mina-church-in-imbaba-cairo/(28.01.2011))

2011 թ. ողջ ընթացքում շարունակվում էին հարձակումները ղապտիական եկեղեցիների և պաշտամունքային վայրերի վրա:

Հարձակումների գագաթնակետը դարձավ հարավային Էդֆուքադաքի մոտակայքում տեղի ունեցած հարձակումը քրիստոնեական «հյուրատան» վրա: Հարձակումն իրականացրած ծայրահեղականներն իրենց այդ քայլը բացատրում էին, նրանով որ հյուրատունն իրականում ծառայել է իբրև չարտոնված եկեղեցի: Նույն վայրում ծայրահեղականներն այրեցին նաև 71-ամյա ղապտիական մի եկեղեցի²²:

Եկեղեցիների ավերումը, մասնավորապես Իմբաբայում եկեղեցու վրա իրականացված հարձակումը, ղապտիների իրավունքների ոտնահարումը և հեղափոխությունից հետո չիրականացված սպասելիքները դրդեցին ղապտի երիտասարդներին միավորվել մի աշխարհիկ խմբի շուրջ, որին աջակցում էին նաև փոքրաթիվ ղապտի քահանաներ: Այսպիսով, ստեղծվեց սոցիալական շարժում, որի նպատակը ղապտիների և ղապտիական խնդիրների լուծման համար ավելի մեծ պաշտպանություն ապահովելն էր: Խումբն ինքն իրեն անվանեց Մասպերո երիտասարդական միավորում:

Ինչպես նշում է Մասպերոյի ակտիվիստներից Ֆադի Ֆիլիպը Ջայսոն Կասպերին տված հարցազրույցում. «Մենք նպատակ ունենք քաղաքական դեմք լինել Եգիպտոսի քրիստոնյաների համար՝ դա անելով եկեղեցուց դուրս: Մենք չենք փորձում տանել առաջնորդի դերը եկեղեցու փոխարեն, այլ փորձում ենք ցույց տալ մարդկանց, որ կարիք չկա դժվարությունների հանդիպելիս վազել եկեղեցի: Ցավոք սրտի, շատ քրիստոնյաներ դարձել են անհեռատես՝ կարծելով, որ կարող են փոխել իրավիճակը՝ պարզապես աղոթելով և երգելով: Կարծում եմ՝ աղոթելը և երգելը կարևոր են, բայց մենք պետք է ավելին անենք»²³ :

²² Jensen J., Egyptian military forcibly quells protest in Cairo, The World, 05. 10. 2011, <https://theworld.org/stories/2011-10-05/egyptian-military-forcibly-quells-protest-cairo> (28.01.2011)

²³ Casper J., Interview with the Maspero Youth Union, Sympathetic Reporting on the Middle East, 29. 09. 2011 <https://jaysoncasper.com/2011/09/29/interview-with-the-maspero-youth-union/> (28.01.2011).

Մասպերոյի անդամների թիվը 200-300 է: Միությունն իր մասնաճյուղերն է բացել Եգիպտոսի ղպտիաբնակ քաղաքներում՝ Ասյուտում, Իսմաիլիայում և Ալեքսանդրիայում: Հետաքրքրականն այն է, որ բացի քրիստոնյա ղպտիներից, միությունն ունի նաև մուսուլման աջակիցներ, նրանցից էր Նաբիլ Շարաֆ ալ- Դինը²⁴ և Ֆատիմա Նաուրը²⁵: Նշենք նաև, որ մի քանի մուսուլմաններ հանդես են եկել Մասպերո խմբի պաշտպանությանը, երբ վերջինս ենթարկվեց հարձակման²⁶:

Մասպերո միությունն իրականացրել է մի շարք երթեր, որոնցից ամենահայտնին 2011 թ. հոկտեմբերի 9-ի երթն էր, որը սկսվել է Կահիրեի Շուբրայի արվարձանից՝ ավարտվելով Կահիրեի կապի և հեռուստատեսության շենքի մոտ:

Երթին մասնակից ղպտիները բողոքում էին, որ կառավարությունը հետամուտ չի եղել պատշաճ հետաքննություն իրականացնել Մերինաբում եկեղեցու այրման փաստի վերաբերյալ: Ցուցարարների նկատմամբ բռնություն է կիրառվել, որին զոհ էր դարձել առնվազն 25 անձ, իսկ 300 ցուցարար վիրավորում էր ստացել²⁷:

Մասպերոյի միջադեպը ցույց տվեց, որ ղպտիները նույնքան խոցելի էին, որքան եղել են մինչև հեղափոխությունը: Ինչպես Մուբարաքի ժամանակաշրջանում, հարձակումների մեծ մասն ուղեկցվում էր պաշտոնական անտարբերության և տեղական նախապաշարմունքների համադրությամբ: Ղպտիներն ականատես եղան, թե ինչպես են 2011 թ. նոյեմբեր - 2012 թ. հունվարի խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարան «Մուսուլման եղբայրներ» կուսակցության անդամները: «Մուսուլ-

²⁴ Նաբիլ Շարաֆ ալ- Դինը Մերձավոր Արևելքի ամենահայտնի լրատվության ալ-Ահրամի երկարամյան մեկնաբաններից և քաղաքական վերլուծաբաններից է:

²⁵ Ֆատիմա Նաուրը եգիպտացի հայտնի թարգմանիչ, գրող և բանաստեղծ է:

²⁶ Casper J., նշվ. աշխ.:

²⁷ From Arab spring to Coptic winter: sectarian violence and the struggle for democratic transition in Egypt, Commission on Security and Cooperation in Europe (U.S. Helsinki Commission), 15.11.2011, <https://www.congress.gov/event/112th-congress/joint-event/LC28824/text?s=1&r=69> (հասանելի է 28.01.2011-ի դրությամբ)

ման Եղբայրներն»²⁸ ու առաջատար սալաֆիական կուսակցությունը (Ալ-Նուր)²⁹ իրենց վերահսկողության տակ վերցրեցին խորհրդարանը՝ ստանալով մանդատների ավելի քան երկու երրորդը³⁰:

Տարբեր լիբերալ կուսակցություններից թվով ութ ղապտիներ, հաղթեցին խորհրդարանական ընտրություններում: Հետագայում նրանց շարքերն ավելացան ևս հինգ ղապտիներով, ովքեր նշանակվել էին ռազմական կառավարության կողմից: Խորհրդարանական ընտրությունից վեց ամիս անց ընտրություններն անվավեր ճանաչվեցին Սահմանադրական դատարանի կողմից: Զինվորական խորհուրդը որոշում կայացրեց սահմանադրական նոր ժողով ստեղծելու մասին, որը փոփոխություններ էր իրականացնելու Եգիպտոսի սահմանադրության մեջ: Սահմանադրական ժողովում ընդգրկված էին նաև մի շարք ղապտիներ, ովքեր նշանակվել էին նախկին խորհրդարանում³¹:

²⁸ «Մուսուլման եղբայրներ» (արաբերեն՝ ալ-Իխվանալ-Մուսլիմուն) կրոնաքաղաքական կազմակերպությունը հիմնադրվել է 1928 թվականին Եգիպտոսի Իսմաիլիա քաղաքում Հասանալ Բաննայի կողմից: Իսլամական կողմնորոշմամբ այս կազմակերպությունը կոչ էր անում հիմնվել Ղուրանի և հադիսների վրա որպես ժամանակակից իսլամական առողջ հասարակության ուղեցույց: Կազմակերպությունն արագորեն տարածվեց Եգիպտոսում, Սուդանում, Սիրիայում, Պաղեստինում, Լիբանանում և Հյուսիսային Աֆրիկայում: (Մանրամասն տե՛ս Muslim Brotherhood, Britannica, 20. 01. 2023, <https://www.britannica.com/topic/Muslim-Brotherhood> (հասանելի է 28.01.2011 –ի դրությամբ):

²⁹ Ալ-Նուրը եգիպտական սալաֆիական քաղաքական կուսակցությունն է, որը 1982 թվականից Ալեքսանդրիայում իր ստեղծման պահից բացահայտորեն մերժում էր ինչպես բռնությունը, այնպես էլ ուղղակի քաղաքական ներգրավվածությունը: Վարդապետական առումով այն ծագել է սալաֆիական ուսմունքից՝ մուսուլմաններին ուղղորդել ու դեպի կրոնական պրակտիկայի և հավատքի «մաքրում», այլ ոչ թե ուղղակի քաղաքական վիճաբանության մեջ մտնելու, ինչպես դա, ըստ սալաֆիների, արել էին «Մուսուլման եղբայրները» (մանրամասն տե՛ս **Olidort J.**, *The al-Nour Party: A Salafi Partner in the Fight Against Terrorism?*, 13.05.2015, <https://www.washingtoninstitute.org/policy-analysis/al-nour-party-salafi-partner-fight-against-terrorism> (հասանելի է 28.01.2011 –ի դրությամբ):

³⁰ **Brownlee J.**, *Violence against Copts in Egypt*, Carnegie Endowment for International Peace, Washington DC, 2013, p. 15-16.

³¹ **Rowe P.**, նշվ. աշխ., էջ 242:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ «արաբական գարունը», և մասնավորապես, 2011 թ.-ի հունվարի 25-ի հեղափոխությունը պատմական հնարավորություն էր դպտիների համար՝ դրսևորվելու որպես Եգիպտոսի «լիիրավ քաղաքացի», այլ ոչ թե որպես կրոնական փոքրամասնության ներկայացուցիչ, ինչից էլ լիարժեք օգտվեցին դպտիները: Ներգրավվելով փողոցային, քաղաքացիական, համացանցային, իսկ հետագայում նաև քաղաքական պայքարի մեջ, դպտիները, իրենց մուսուլման հայրենակիցների հետ կարողացան տապալել Հոսնի Մուբարաքի երեսնամյա իշխանությունը: Մակայն, չարդարացան դպտիների ակնկալիքները՝ կապված հեղափոխության հետ, որոնք դրսևորվեցին մասնավորապես 2011 թ. նոյեմբեր- 2012 թ. հունվար ամիսներին անցկացված խորհրդարանական ընտրություններում: Ընտրությունների արդյունքները դառն էին դպտիների համար, քանի որ ասպարեզը զբաղեցրին ծայրահեղ իսլամական կուսակցությունները, ինչպես օրինակ՝ «Մուսուլման եղբայրներն» ու սալաֆիական «Ալ-Նուր» կուսակցությունը: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ դպտիների համար «արաբական գարունն» գործընթացներին մասնակցությունը կարևոր քաղաքական և քաղաքացիական փորձ էր, որը նպաստեց համայնքի ակտիվացմանը:

Ամփոփում

Մույն հոդվածը վերլուծում է Եգիպտոսի բնիկների՝ դպտիների դիրքորոշումը Եգիպտոսում «արաբական գարունն» շրջանակներում տեղի ունեցած 2011 թ. հունվարի 25-ի հեղափոխությանն ու դրան հաջորդած Ռազմական գերագույն խորհրդի կառավարման շրջանում (փետրվար 11 2011թ. - 30 հունիս 2012 թ.) երկրում տեղի ունեցած կարևոր իրադարձություններին:

Ղպտիները, մոտ մեկդարյա պասիվությունից հետո, օգտվելով ստեղծված իրավիճակից, կրկին փորձեցին վերադառնալ հասարակական և քաղաքական դաշտ՝ առաջ քաշելով իրենց հուզող խնդիրները ոչ միայն դպտիական ուղղափառ եկեղեցու օգնությամբ, այլև աշխարհիկ կառույցներ ստեղծելով և փողոցային և համացանցային պայքարի գործիքներն օգտագործելով:

Հողվածում վերլուծվել է նաև ղպտիների նկատմամբ խտրական քաղաքականության որոշ դրսևորումներ ուսումնասիրվող ժամանակաշրջանում: Հողվածը քննարկում է նաև ղպտի ուղղափառ եկեղեցու և պետության միջև առկա հարաբերությունները, ինչպես նաև եկեղեցու վերաբերմունքը «արաբական գարնան» գործընթացների նկատմամբ:

Anna Antonyan
Institute of Oriental Studies
antonyananna235@gmail.com

THE EGYPTIAN COPTS DURING THE REVOLUTION OF JANUARY 25, 2011 AND THE SUPREME MILITARY COUNCIL RULE (FEBRUARY 11, 2011- JUNE 30, 2012)

This article analyzes the position of the Copts, indigenous Egyptian Christians, on the Egyptian Revolution of the 25 January 2011, which took place as a solid outcome of the “Arab spring” in Egypt, and important events that took place in the country under the rule of the Supreme Military Council (February 11, 2011 . - June 30, 2012).

The Copts, after almost a century of passivity, took advantage of the situation and tried to return to the socio-political arena, putting forward their concerns not only with the help of the Coptic Orthodox Church, but also by establishing secular structures and using the tools of street and Internet struggle.

Some aspects of discriminatory policies against Copts in the period under study are analyzed in the article. The article also examines the existing relations between the Coptic Orthodox Church and the state, as well as the attitude of the church to the processes of the “Arab Spring”.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եգիպտոսի գրոհայինների թիրախում հայ-ղպտիական ընտանիքներն են, <https://www.tert.am/am/news/2011/09/29/egipt/357994> 29.01.2011:

2. **Հովհաննիսյան Ն., Գևորգյան Գ.**, «Արաբական գարունը» Համաարաբական ըմբոստությունը հանուն արաբական հասարակության արդիականացման (Թունիս, Եգիպտոս, Եմեն, Լիբիա), Երևան, 2018:

3. **Желтов В.**, Желтов М., Религия и арабская весна, Вестник КемГУ, N 2 (50), 2012.

4. **Кобищанов Т.**, Большая российская энциклопедия 2004-2007.

5. Anilnetto.com, Muslim- Christian solidarity in Tahrir, <https://anilnetto.com/religion-and-ethnicity/christianity/muslim-christian-solidarity-in-tahrir-sq/> 06.02.2011.

6. Britannica, Muslim Brotherhood, <https://www.britannica.com/topic/Muslim-Brotherhood> 20.01.2023.

7. **Brownlee J.**, Violence against Copts in Egypt, Carnegie Endowment for International Peace, Washington DC, 2013.

8. **Casper J.**, Attack on St. Mina Church in Imbaba, Cairo, Sympathetic Reporting on the Middle East, 08.05.2011.

9. **Casper J.**, Interview with the Maspero Youth Union, Sympathetic Reporting on the Middle East, <https://jaysoncasper.com/2011/09/29/interview-with-the-maspero-youth-union/> 29.09.2011

10. Congress.gov., From Arab spring to Coptic winter: sectarian violence and the struggle for democratic transition in Egypt, Commission on Security and Cooperation in Europe (U.S. Helsinki Commission) <https://www.congress.gov/event/112th-congress/joint-event/LC28824/text?s=1&r=69>

11. **Hulsman C.**, The Sharia as the Main Source of Legislation? The Egyptian Debate on Article II of the Egyptian Constitution, Marbur, 2012.

12. **Jensen J.**, Egyptian military forcibly quells protest in Cairo, The World, 05. 10. 2011.

13. **McLaurin R.**, The Political Role of Minority Groups in the Middle East, New York, 1979.

14. **Monier E.**, The Arab Spring and Coptic–Muslim Relations: from Mubarak to the Muslim Brotherhood, European Yearbook of Minority Issues, vol. 11, 2012.

15. **Olidort J.**, The al-Nour Party: A Salafi Partner in the Fight Against Terrorism, 13.05.2015, <https://www.washingtoninstitute.org/policy-analysis/al-nour-party-salafi-partner-fight-against-terrorism>

16. Rowe P., Democracy and Disillusionment: Copts and the Arab Spring, Langley, 2014.

17. FRANCE 24, "Al-īntihārī kān yuḥaṭiṭ al-tafğīr nafsahu dāḥil kanīsaṭ "Al-qiddīsayn", <https://www.france24.com/ar/20110105-egypt-victims-kamikaze-attack-qaaeda-copts>

18. Marefa.org, Ḥizb al-miṣryin al-'aḥrār.

19. Ṭaha A., Kīf nafham 'lāqaṭ al-'aqbāṭ bil daūlaṭ al-Maṣrīya ? Maḥṭṭāt al-'lāqaṭ bīn al-kanisa wāl siyāsāt fi Miṣr, <http://surl.li/epimp> 18.02.2015.

Գառնիկ Սահակյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

sahakyang972@gmail.com

**ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ
ՀԵՏԻՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1991-2011 ԹԹ.)**

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Հնդկաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հարավկովկասյան ուղղության սկզբնավորումը և հիմնական առանձնահատկությունները հետխորհրդային շրջանում (1991-2011 թթ.): Հնդկաստանի քաղաքականությունը Հարավային Կովկասում կերպափոխման տարբեր փուլեր է անցել: Սկզբնական շրջանում, որը համընկնում է ուսումնասիրվող փուլի հետ, հարաբերություններն ընթացել են բավական դանդաղ նաև այն պատճառով, որ Հարավային Կովկասում մի շարք հակամարտություններ էին ընթանում, իսկ Հնդկաստանը աշխարհաքաղաքական ընդլայնման համար դեռ պատրաստ չէր: Նշված ժամանակաշրջանի ուսումնասիրությունը հիմնավոր է, քանի որ երկկողմ հարաբերությունների տեսական և գործնական հիմքերն են դրվում: Ուսումնասիրության մեթոդաբանության հիմքում կոնտենտ և դիսկուրս վերլուծության սկզբունքն է: Ժամանակագրական առումով ուսումնասիրությունն ընդգրկում է քսան տարի՝ 1991-2011 թվականները, որը Հնդկաստանի և հարավկովկասյան հանրապետությունների հետ համագործակցության սկզբնավորման փուլն է:

Դեռևս խորհրդային շրջանում հարավկովկասյան հանրապետություններում ճանաչում էին Հնդկաստանը, քանի որ քաջածանոթ էին հնդկական մշակույթին՝ ֆիլմերին, համեմունքներին, կերպասեղենին և դեկորատիվ արվեստին: Հայաստանի դեպքում իրողություններն այլ էին: Հայ-հնդկական կապերը դարավոր

պատմություն ունեն: 18-րդ դարում Հնդկաստանը եղել է հայ քաղաքական մտքի և մշակույթի զարգացման կենտրոնը:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հնդկաստանը ճանաչեց և դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հարավային Կովկասի երեք պետությունների՝ Հայաստանի Հանրապետության, Վրաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության հետ¹, ինչն էլ հիմք դարձավ միջպետական համագործակցության հետագա զարգացման համար: Սկզբնական շրջանում Հարավային Կովկասի երեք հանրապետությունների և Հնդկաստանի միջև հարաբերություններն այնքան էլ միանշանակ չէին: Հնդկաստանն այդ շրջանում չունեք հստակ հայեցակարգ և ռազմավարական ծրագիր Հարավային Կովկասի հարցում, մինչդեռ տնտեսական կապերը դիտարկվում էին որպես առաջնահերթություն²: Հարավային Կովկասում ձևավորվել էին հակամարտության մի շարք օջախներ՝ կապված Հարավային Օսեթիայի, Աբխազիայի և Լեռնային Ղարաբաղի խնդրի հետ, ինչը հետ էր պահում Հնդկաստանին՝ ակտիվ համագործակցությունից: Պատահական չէ, որ Հնդկաստանը շեշտը դրեց Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի վրա³: Միայն ավելի ուշ Հնդկաստանի Հանրապետությունը, աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործոնների ազդեցությամբ, որդեգրեց համապարփակ մոտեցումներ, ինչն էլ նպաստեց երկկողմ հարաբերությունների շոշափելի զարգացմանը⁴: Տարիների ընթացքում երկկողմ հարաբերություններում կուտակված փորձն ու ձեռքբերումներն

¹ Հնդկաստանի Հանրապետության և Հարավային Կովկասի երեք հանրապետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը տեղի է ունեցել հետևյալ ժամանակագրությամբ՝ Հայաստանի Հանրապետություն՝ 1992 թ. սեպտեմբերի 31-ին, Վրաստանի Հանրապետություն՝ 1992 թ. սեպտեմբերի 28-ին, Ադրբեջանի Հանրապետություն՝ 1992 թ. հունվարի 28-ին:

² *St u Chatterjee A.*, The South Caucasus: Transition from Subjugation to Independence (Tracing India's Footprints), <https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/09700-161.2021.2020445>, 28.02.2022

³ *Am Achal Malhotra*, Inida and South Caucasus, <https://www.vifindia.org/article/-2022/november/30/india-and-the-south-caucasus>, 30.11.2022

⁴ *Փաշայան Ա.*, Հայաստան-Հնդկաստան. հարաբերությունների ընթացքն ու հեռանկարը, Դրօշակ, 2023 թ. 1-ին համար, <https://www.droshak.am/>, 02.03.2023

ի վերջո հանգեցրեցին ավելի հստակ գործիքակազմերի մշակմանը: Իսկ Հնդկաստան-Հայաստան հարաբերությունները, մասնավորապես 2020 թ. արցախյան պատերազմից հետո, ձեռք բերեցին ռազմավարական նշանակություն:

Հնդկաստան-Հայաստան հարաբերությունների սկզբնավորումն ու զարգացումը

Հայաստանի Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունները, որոնք վերաիմաստավորվել են Խորհրդային Միության փլուզումից հետո, սկզբնավորվել են մի շարք պայմանագրերի ստորագրմամբ⁵: Դրանցից կարևոր են «ՀՀ և Հնդկաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ, 31 օգոստոսի, 1992 թ.», «ՀՀ և Հնդկաստանի միջև հյուպատոսական հարաբերություններ հաստատելու մասին, 31 օգոստոսի, 1992 թ.», «ՀՀ և Հնդկաստանի կառավարությունների միջև առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ, 11 մարտի, 1993 թ.», «ՀՀ և Հնդկաստանի արտաքին գործերի նախարարությունների միջև խորհրդակցությունների վերաբերյալ, 11 մարտի, 1993 թ.», «ՀՀ և Հնդկաստանի պաշտպանության նախարարությունների միջև պաշտպանության բնագավառում համագործակցության մասին, 23 մայիսի, 2003թ.», «ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և Հնդկաստանի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության միջև տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայությունների բնագավառում համագործակցության մասին, 31 հոկտեմբերի, 2003 թ.», «ՀՀ և Հնդկաստանի խորհրդարանների միջև համագործակցության մասին, հոկտեմբեր 2005 թ.», «Երևան և Դելի բարեկամական քաղաքների միջև համագործակցության մասին, 13 սեպտեմբերի, 2008 թ.», «ՀՀ և Հնդկաստանի կառավարությունների միջև հայ-հնդկական տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն հիմնելու մասին, 26 հունիսի, 2009 թ.», «ՀՀ և Հնդկաստանի կառավարու-

⁵ Երկողմ հարաբերություններ, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/in02.03.2023>

թյունների միջև գիտության և տեխնոլոգիաների բնագավառներում 2012-2015թթ. համագործակցության մասին, 1 նոյեմբերի 2011թ.», «ՀՀ և Հնդկաստանի մշակույթի նախարարությունների միջև 2011-2012 թթ. մշակութային ոլորտում համագործակցության մասին, 11 նոյեմբերի, 2010 թ.», «ՀՀ և Հնդկաստանի կառավարությունների միջև գույքի և եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին, 31 հոկտեմբերի, 2003 թ.», «ՀՀ Հանրային հեռուստատեսության և Հնդկաստանի Դուրդարշան հեռուստաընկերության միջև համագործակցության մասին, 11 նոյեմբերի, 2010 թ.», «Հայ-հնդկական Գործարար խորհրդի ստեղծման մասին, 31 հոկտեմբերի 2011 թ.» և այլն⁶:

Միջպետական հարաբերություններն ամրապնդվել են երկկողմ պետական այցերով՝ ՀՀ հիմնադիր նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի՝ 1995 թ.-ին Հնդկաստան, իսկ հնդկական կողմից առաջինը՝ Հնդկաստանի պետնախարար Դիզվիջեյ Սինգիի՝ 2003 թ.-ին Հայաստան կատարած այցերով⁷: Ռուսաստանի Դաշնությունից հետո Հնդկաստանի Հանրապետությունը երկրորդ պետությունն է, ում հետ ՀՀ-ն կնքել է «Բարեկամության և համագործակցության մասին» պայմանագիր⁸:

Արցախյան պատերազմի շրջանում Հնդկաստանը Հայաստանին ցուցաբերեց մարդասիրական օգնություն: Հակամարտությունից տուժած անձանց 1994-1995 թթ. նվիրաբերվել է դեղերի երկու խմբաքանակ⁹: Օգնությունը հատկացվեց միայն Հայաստանին: Իսկ ահա 2000 թ. երաշտի հետևանքով առաջացած խնդիրների լուծման համար Հնդկաստանի Հանրապետությունը Հայաստան ուղարկեց մարդասիրական օգնություն՝ 750 մլն. տոննա ցորեն և 250 մլն. բրինձ¹⁰: Բացի այդ, Հնդկաստանը 2002 թ. շուրջ 5

⁶ **Նույն տեղում:**

⁷ **Նույն տեղում:**

⁸ ՀՀ և Հնդկաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/in 02.03.2023>

⁹ Armenia-India bilateral relations, <http://www.indianembassy.am/relation.html 02.03.2023>

¹⁰ **Նույն տեղում:**

մլն. դրլարի դրամաշնորհ հատկացրեց և արդեն դեկտեմբերին Հայաստան մատակարարվեց թվով 300 գյուղատնտեսական մեքենա¹¹:

2000-ականների սկզբներին երկկողմ հարաբերությունները ստացան ավելի դինամիկ բնույթ: Հստակեցվեցին համագործակցության ոլորտները: Մասնավորապես, 2003 թ. մայիսի 23-ին և հոկտեմբերի 31-ին ստորագրվեցին նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին վերաբերող պայմանագրեր: Ըստ այդմ՝ կողմերի համար ապահովվելու էին հավասար և շահեկան ներդրումային պայմաններ¹²:

Արդեն 2000-ականների սկզբներից գործնական փուլ մտան կրթության ոլորտում ստորագրված պայմանագրերը: Էական առաջընթաց նկատվեց հատկապես բժշկական կրթության ոլորտում, որտեղ ներգրավվեցին մեծ թվով հնդիկ ուսանողներ: Միսիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանում հնդիկ ուսանողների համար բացվեց հատուկ բաժին, որտեղ նրանք սկսեցին ուսանել ռուսերեն, անգլերեն և հայերեն լեզուներով: Հնդիկ ուսանողների թիվը տարեցտարի աճեց: Աստիճանաբար, Հայաստանում ձևավորվեց հնդկական համայնք, որի կորիզը բժշկական ոլորտի ուսանողներն էին: Հնդիկ շրջանավարտներից շատերը հետագայում հաստատվեցին Հայաստանում և Հնդկաստան չվերադարձան: Հարկ է նշել, որ կրթության ոլորտը հայ-հնդկական համագործակցության ամենահաջողված փորձառություններից մեկն է: Ներկայումս ՀՀ-ում սովորող հնդիկ ուսանողների թիվը մոտ 3000 է:

¹¹ Armenia-India bilateral relations, <http://www.indianembassy.am/relation.html> 02.03.2023

¹² 2003 թ. մայիսի 23-ին Նյու Դելիում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=4779> 22.12.2003

Հնդկաստան-Վրաստան հարաբերությունների սկզբնավորումն ու հիմնական առանձնահատկությունները

Հնդկաստանի և Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը համընկավ Վրաստանի համար բավական բարդ ժամանակահատվածի հետ՝ կապված Հարավային Օսեթիայի և Աբխազիայի հակամարտությունների հետ: Հնդկաստանը Աբխազիայի հակամարտությունից տուժած անձանց մոտ կես միլիոն դուլար մարդասիրական օգնություն տրամադրեց¹³: Վրաստանի արտաքին գործերի նախարար Իրակլի Մենագարիշվիլին վրացի առաջին բարձրաստիճան պաշտոնյան էր, ով 2000 թ. մայիսին այցելեց Նյու Դելի և հանդիպեց արտգործնախարար Ջասվանտ Սինգհի հետ: 2008 թ. ռուս-վրացական պատերազմի ժամանակ Հնդկաստանը, որը Ռուսաստանի սերտ դաշնակիցն էր, չեզոք դիրքորոշում որդեգրեց: 2005 թ. Վրաստանը բացեց պատվո հյուպատոսություն Նյու Դելիում, որը 2010 թ. վերածվեց դեսպանության: Հնդկաստանում Վրաստանի առաջին ռեզիդենտ դեսպանը պաշտոնավարեց 2010 թ. փետրվարի 25-ից¹⁴:

Երկկողմ հարաբերությունների զարգացման նոր խթան դարձան միջպետական պայմանագրերն ու ձեռքբերված համաձայնությունները, որոնք հիմնականում առնչվում էին տնտեսական ոլորտին: 2009-2010 թթ. Վրաստան-Հնդկաստան առևտրատնտեսական շրջանառությունն արդեն կազմում էր 66 մլն դոլլար, որն ավելի էր նախորդ տարիների համեմատությամբ և հետագայում զարգացավ հարաձուն կերպով¹⁵: Հարաբերությունների զարգացման խթան դարձան կողմերի միջև մի շարք կառուցողական քննարկումները¹⁶:

Վրաստան-Հնդկաստան հարաբերությունների զարգացման ամենահետաքրքիր կոմերից մեկը դարձավ գյուղատնտեսություն-

¹³ India-Georgia Relations, http://mea.gov.in/Portal/ForeignRelation/Georgia_January_2014.pdf 26.02.2022

¹⁴ **Նույն տեղում:**

¹⁵ **Նույն տեղում:**

¹⁶ Rajorshi Roy, <https://newsonair.com/2021/07/17/india-georgia-charting-a-new-course-in-bilateral-relations/>, 02.03.2023.

նր: Բացի այդ, ներդրվեցին մի շարք կրթական, մշակութային և բիզնես ծրագրեր: Գյուղատնտեսական ոլորտում հնդկական ընկերությունները մեծ ներդրումներ արեցին: Հնդկաստանի շուրջ 150 քաղաքացի՝ հիմնականում Փենջաբից, ձեռք բերեցին շուրջ 1500 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածք, բավական մատչելի գներով՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու համար: Գյուղատնտեսական հողատարածքների գնմանը և շահագործմանը նպաստեց հատկապես գյուղատնտեսության մեջ օտարերկրյա ներդրումները խրախուսող Վրաստանի քաղաքականությունը¹⁷: Հնդկական ներդրումներ են տեղի ունեցել նաև մետաղագործության և մետաղամշակման ոլորտներում: 2009 թ. նոյեմբերին Վրաստանում բացվել է JSW Steel Netherlands BV ընկերության հոլանդական դուստր ձեռնարկությունը, որն ունեցել է հնդկական մասնաբաժին: Այն համագործակցել է Gerorgian Stell Group Limited ընկերության հետ՝ մետաղական ջարդոնները ամուր պողպատե խողովակների վերածելու համար¹⁸:

Հնդկաստանից բազմաթիվ ուսանողներ, ինչպես Հայաստանում, սկսեցին սովորել նաև Վրաստանում: Ծրագրերի հիմնական ֆինանսավորումը հովանավորվում էր Հնդկաստանի Մահաթմա Գանդիի անվան հիմնադրամը: Հնդկական մշակույթի ներկայությունն այստեղ շարունակեց զարգանալ: Չնայած այն հանգամանքին, որ Հնդկաստանի Հանրապետությունը Վրաստանում չունի դեսպանություն (Երևանում գործող Հնդկաստանի Հանրապետության դեսպանատունը սպասարկում էր նաև Վրաստանը)¹⁹, այնուամենայնիվ, Վրաստան-Հնդկաստան միջպետական հարաբերությունները զարգացման կայուն ընթացք ստացան:

¹⁷ India-Georgia Relations, http://mea.gov.in/Portal/ForeignRelation/Georgia_January_-2014.pdf, 26.02.2022

¹⁸ **Նույն տեղում:**

¹⁹ Hriday Ch. Sarma and Levan Khutsishvili India-Georgia Relationship: A Window of Opportunity, https://www.ssoar.info/ssoar/bitstream/handle/document/54875/ssoar-indrastraglobal-2017-11-sarma_et_al-India-Georgia_Relationship_A_Window_of.pdf?sequence=1 03.11.2017

Հնդկաստան-Ադրբեջան երկկողմ հարաբերությունների առանձնահատկությունները

2000 թ. հոկտեմբերի 5-ին Ադրբեջանի Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունները բարելավելու համար ստեղծվեց աշխատանքային խումբ, որի ջանքերով 2004 թ. Հնդկաստանում բացվեց Ադրբեջանի դեսպանատունը²⁰: Սա նոր խթան դարձավ երկուստեք հարաբերությունների զարգացման համար: Մեծ թափ հավաքեցին տնտեսական հարաբերությունները, առաջընթաց գրանցվեց տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Ընդհանուր առմամբ, նշված փուլում կնքվեցին մեկ տասնյակից ավել համաձայնագրեր, որոնք էականորեն դրական ազդեցություն ունեցան երկու պետությունների միջև հարաբերությունների ընթացքի վրա: Հարավկովկասյան երեք հանրապետություններից Հնդկաստանի և Ադրբեջանի հարաբերություններն ամենաակտիվն էին և ցուցանիշներով ամենաբարձրը: Ադրբեջանը որպես հումքային պետություն հետաքրքրություն էր ներկայացնում Հնդկաստանի համար: Պատահական չէ, որ հնդկական ընկերությունները շուտով ձեռնամուխ եղան Ադրբեջանից հում նավթի արտահանմանը: 2005 թ. երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմեց շուրջ 50 միլիոն դոլլար, 2007 թ.՝ 214 միլիոն, 2010 թ.-ին՝ 330 միլիոն դոլլար: Իսկ թեյի և դեղագործական ապրանքների տոկոսային հարաբերակցությունը աստիճանաբար նվազեց հոգուտ մետաղական հումքի: Հընթացս, տեղի ունեցան Ադրբեջան-Հնդկաստան տարաբնույթ ոլորտներին վերաբերող կառուցողական հանդիպումներ, որոնք հիմք դարձան նորանոր համագործակցությունների ձևավորման համար:

Հընթացս, Հնդկաստանը Ադրբեջանին տրամադրեց երկու տեսակ կրթաթոշակ՝ Հնդկաստանի մշակութային հարաբերությունների խորհրդի ընդհանուր կրթաթոշակային ծրագրերի շրջանակներում: Արդեն 2010 թ. Ադրբեջանի լեզուների ուսումնասիրման համալսարանում բացվեց հինդի լեզվի ուսումնասիր-

²⁰ Azerbaijan-India relations, https://mea.gov.in/Portal/ForeignRelation/India-Azerbaijan_Relations.pdf 23.02.2022

ման բաժին²¹: Հնդկական մշակույթի մի շարք ներկայացուցիչներ հինդուն ներկայացրեցին 2011 թ. Բաքվում կայացած Մուղամի երկրորդ փառատոնին և Skill Way Music Festival-ում:

Ամփոփում

Հարավային Կովկասի նկատմամբ Հնդկաստանի Հանրապետության քաղաքականությունը հետխորհրդային շրջանում ընթանում էր դանդաղ, բայց կայուն ընթացքով: Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ Հնդկաստանի երկկողմ հարաբերություններում ավելի տիրապետող էր տնտեսական, քան քաղաքական բաղադրիչը: Հատկանշական է, որ երեք հանրապետությունում էլ ձևավորվում են փոքրաքանակ հնդկական համայնքներ: Երկկողմ հարաբերությունները կրում էին նաև անցումային շրջանի և բազմաբևեռ աշխարհի ձևավորման ազդեցությունը: Այդ շրջանում Հնդկաստանը աշխարհաքաղաքական մեծ ամբիցիաներ չէր դրսևորում:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Հնդկաստանի Հանրապետությունում աստիճանաբար մեծ թափ է ստանում տնտեսական ազատականացման գործընթացը, ինչը հետագայում նպաստելու էր Հնդկաստանի արտաքին քաղաքականության աշխուժացմանն ու հետագա ընդլայնմանը: Հընթացս, Հարավային Կովկասի հանրապետություններն առաջին քայլերն են անում շուկայական հարաբերությունների զարգացման ուղղությամբ՝ փնտրելով նոր գործընկերներ, որոնց մեջ Հնդկաստանն աստիճանաբար հանգուցային նշանակություն է ձեռք բերում, իսկ հնդկական մշակույթը սկսում է նորովի ներկայանալ հետխորհրդային տարածաշրջանում՝ որպես «փափուկ ուժի» գործիքակազմ:

²¹ Indian Council of World Affairs, New Delhi, India-Azerbaijan Relations: Emerging Areas of Cooperation, https://www.icwa.in/show_content.php?lang=1&level=3&ls_id=-1759&lid=756

**THE FOREIGN POLICY OF THE REPUBLIC OF INDIA IN THE SOUTH
CAUCASUS IN THE POST-SOVIET PERIOD (1991-2011)**

The main goal of the article is to study the transformation of the South Caucasus direction of the foreign policy of the Republic of India in the post-Soviet period, 1991-2011. The article separately discusses the course of bilateral relations between India-Armenia, India-Georgia, and India-Azerbaijan. Most of all India was interested in developing partnership with Azerbaijan because of its oil and gas reserves. The trade between the two states was greater than with Georgia and Armenia. One of the outcomes of the research is that India's policy in the South Caucasus was proceeding rather slowly, but steadily. India didn't adopt a strategic policy towards the South Caucasus. The economic sphere received more priority. India's strategy in the region became more conceptual and ambitious when the country transferred to the fifth largest economy in the world. The study's methodology is based on discourse and content analysis.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Փաշայան Ա.**, Հայաստան-Հնդկաստան. հարաբերությունների ընթացքն ու հեռանկարը, Դրոշակ, 2023 թ. 1-ին համար, <https://www.droshak.am/>, 02.03.2023
2. **Chatterjee A.**, The South Caucasus: Transition from Subjugation to Independence (Tracing India's Footprints), <https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/09700161.2021.2020445>, 28.02.2022
3. Am Achal Malhotra, November 30, 2022, Inida and South Caucasus, <https://www.vifindia.org/article/2022/november/30/india-and-the-south-caucasus>, 30.11.2022
4. <https://www.mfa.am/hy/bilateral-relations/in> 02.03.2023
5. http://mea.gov.in/Portal/ForeignRelation/Georgia_January_2014.pdf 26.02.2022

6. <https://newsonair.com/2021/07/17/india-georgia-charting-a-new-course-in-bilateral-relations/>, 17.07.2021
7. **Hriday Ch.** Sarma and Levan Khutsishvili India-Georgia Relationship: A Window of Opportunity, https://www.ssoar.info/ssoar/bitstream/handle/document/54875/ssoar-indrastraglobal-2017-11-sarma_et_al-India_Georgia_Relationship_A_Window_of.pdf?sequence=1 03.11.2017
8. Azerbaijan-India relations, https://mea.gov.in/Portal/Foreign-Relation/India-Azerbaijan__Relations.pdf 23.02.2022
9. Indian Council of World Affairs, New Delhi, India-Azerbaijan Relations: Emerging Areas of Cooperation, https://www.icwa.in/show_content.php?lang=1&level=3&ls_id=1759&lid=756

Roman Melikyan
PhD in Political Sciences, Associate Professor
European University of Armenia
melikyan.roman2911@gmail.com

RA CIVIL SOCIETY AND GLOBAL CHALLENGES OF DIGITAL DIPLOMACY

In the modern world order, together with the processes of democracy and globalization, the institutional development of a new type of diplomacy plays a key role, that is, digital diplomacy. It is especially important in the context of observing existing problems in civil society, their appropriate solution and overcoming possible risks and threats. In that sense, the topic of the presented work is more than current, because the approaches and technologies of digital diplomacy are not only in great demand and involvement in the Republic of Armenia, but also as the best way to overcome existing problems and challenges, there is a certain tendency to increase the possibilities of their development and applicability in the Armenian civil society.

The concept, methodology, key importance, goals, approaches, problems and technologies of digital diplomacy are considered in the presented work. Their experience and development opportunities in the outside world are analyzed. The work emphasizes and justifies the place of digital diplomacy in the system of modern diplomacy, emphasizing the study of development issues in the context of civil society. The problems of digital diplomacy in the development and strengthening of the civil society of the Republic of Armenia are analyzed, as well as the benefits and necessity of digital diplomacy in the context of its institutional security and security are presented and justified.

In today's transforming world order, where various manifestations, challenges and threats greatly affect sustainable

development and international security systems, the policy of implementation, development and modernization of digital diplomacy¹ capabilities, technologies and tools are increasingly required from modern diplomacy institutes. The applicability of the latter today has a great impact on the decision-making of local, glocal and global actors, on which many human destinies and the future of states depend. Suffice it to mention how a single post on the Internet can cause many problems due to the emotional impulses of the masses, bringing forward the need for the convergence of information flows and channeling it into the right flow, and the critical imperative of justifying and rethinking the problems and dangers caused by them.

The concept of "digital diplomacy" continues to gain greater interest in various scientific and educational centers. Being a modern public and diplomatic direction, it presents itself as a set of information and communication technologies, social networks, blogs and other media platforms, using diplomatic and foreign policy functions. The terms "internet-diplomacy", "social media diplomacy" and "web 2.0. diplomacy" are also often used as synonyms. Digital diplomacy was first used in the United States, among other forms of public diplomacy, such as outreach programs, educational exchanges, cultural and sports projects. Attention to digital diplomacy grew especially after waves of mass protests in the countries of the Middle East and North Africa, which received the name "twitter-revolution" in the media².

In the Republic of Armenia, declared as a democratic state in the modern era, the representatives of the civil society should have their unique role in the formation of public opinion, both in domestic and international political relations. It is believed that sometimes due to some reasons, largely under global impulses and challenges, the establishment of democratic institutions can be disrupted, which is

¹ **Digital Diplomacy.** Theory and practice Edited by **Corneliu Bjola and Marcus Holmes.** First published by Routledge, Abingdon and New York, 2015, p. 15.

² **Mkrtchyan H.,** Digital Diplomacy: opportunities and prospects. "Articles of Yerevan University. International Relations, Political Science", 2016 No. 2 (20), pp. 78-79.

largely due to pressures on civil society and irregular controls, in the context of overcoming which digital diplomacy is of paramount importance. At the same time, it should also be stated that the representative parties and active circles of the Armenian civil society still do not use the opportunities and technologies offered by the digital world at a sufficient level according to the existing challenges.

Although Armenia has several leading records in a number of leading international rating systems, in particular, in "Digital Diplomacy Rating - 2016", Armenia was recognized as a leader in the region and ranked 52nd. Moreover, Georgia took the 65th place, Azerbaijan - the 73rd place, and Iran - the 112th place. In the Post-Soviet space, except for the Baltic states, Armenia lost only to Russia (4th place) and Ukraine (11th place). The leader of the ranking was Great Britain, the last, in 210th place, Papua New Guinea³. When compiling the ranking of digital diplomacy(e-diplomacy), the use of the latest technologies and the Internet to achieve diplomatic goals is evaluated. In that context, it is no coincidence that the annual report on global freedom published by the international human rights organization "Freedom House" already in 2022, according to which the Republic of Armenia has recorded unprecedented progress, occupying the 55th position (2021: 71st, 2020: 75th, 76th in 2019, 73rd in 2018, 68th in 2017)⁴ And this is in the event that a number of laws on restricting the independent press and critical speech were recently adopted in the Republic of Armenia through legislative changes, which directly affects the primary values of civil society⁵.

³ «Foreign & Commonwealth Office 2016». "Digital Diplomacy. The FCO's digital work" <http://blogs.fco.gov.uk/digitaldiplomacy> (10.01.2023).

⁴ «Freedom House» International human rights organization website (*«Freedom House»* միջազգային իրավապաշտպան կազմակերպության. <https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2022> (02.10.2022).

⁵ Freedom of speech continues to be limited in Armenia. Amnesty International: - *"Azatutyun" R/C official website* (Հայաստանում խոսքի ազատությունը շարունակում է սահմանափակված մնալ. Amnesty International. - «Ազատություն» ռ/կ պաշտոնական վեբ-կայք) - <https://www.azatutyun.am/a/31775802.html> (02.01.2023):

The aim of the work is to identify the digital aspects of the institutionalization and consistent development of digital diplomacy in RA in this context and the impact of Armenian civil society on them based on the results of a comparative analysis of the civil society activities operating in the modern world of digital diplomacy. Problems arise from the logic of the formulated goal.

Assess the possibilities of implementation and promotion of digital diplomacy tools in RA.

Identify the conditions and ways of the democratization development of public administration among the civil society.

To justify the aspects and approaches of the activities of mass communication media in the domains of social networks in RA.

To analyze the opportunities for the development of RA's digital diplomacy and the degree of its role in the region in the coming years.

To form relevant ideas and present necessary recommendations in the general process of establishment and development of RA civil society.

The study and research was carried out based on the standards, rules and methods that allow making the work unique, while applying comparative systemic structural-functional approaches, as well as practical and informational models.

The subject of the research is the discovery of the influence of digital diplomacy, the raising of problems and the synchronization of relations with the Armenian civil society.

The object of research is non-governmental organizations, foundations, initiatives, mass media, movements, unions, individual groups.

The scientific novelty of the work includes the following provisions:

- Digital diplomacy had a great impact on the establishment and development of RA civil society. In the course of the study, deficiencies were also revealed, and addressing them in turn will

contribute to more competent campaigns of organizations engaged in civic activities in the territory of the Republic of Armenia.

- Non-governmental organizations, foundations, movements and initiatives fill the sometimes vital gap in government activity. Therefore, civil society-state complementarity or cooperation in the conditions of the use of digital technologies can contribute to the formation of such a platform that will allow transparency to be included in various spheres of the authorities' activities.

Principal Part.

Highlighting the role and influence of digital diplomacy on the development and development of different countries, many states are also widely using its opportunities, setting to overcome the challenges in information and virtual domains.

The Digital Diplomacy Department has been set up at the Ministry of Foreign Affairs and Cooperation of the United Kingdom, which is one of the goals of the British Civil Society.

The high priority of Russia's national interests in digital diplomacy is established by continuous increase in the Internet, with its economic importance, as well as the process of e-government. According to the "Electronic Russia" Federal Target Program (2002-2010), the development of ICT is considered to be an instrument to increase the competitiveness of the economy, to expand the opportunities for its integration opportunities to its integration. Russian state structures also increase their presence on the Internet, including encouraging civil society to be actively involved in that domain. In 2002, the first Russian presidential website appeared, in 2008 the presidential video open, and from 2010, Twitter Microblog account. Today, all the federal ministries, departments and other state bodies have their own websites. The Ministry of Foreign Affairs of the Russian Federation gives everyone the opportunity to follow the

current events of foreign policy on social networks, in particular, using Facebook and Twitter platforms⁶.

The Digital Diplomacy Institute is actively introduced in many Asian countries. In particular, astroturfing technologies are currently being used in China, which aims to form false public opinion on the Internet. Accordingly, special leased people in many forums, media sites and blogs write ordered letters, politicians, political groups or parties to make the impression of national support in various matters.

The US government, defining digital diplomacy in the US government's diplomatic practice, has given American diplomats an opportunity to communicate with Internet users, including a wide range of civil masses. The implementation of US Digital Diplomacy Programs is based on large companies in the Internet industry, including Google Corporation. The starting point of activating the digital policy of the State Department is the recognition of the possible Internet impact on the significant number of users and mobile phones in the world. Indeed, today more than 30% of the world's population are active users, and this figure is constantly growing. The key to understanding the essence of digital diplomacy is to be a technological tool. The US foreign policy and digital diplomacy are based on ideological bases, which effectively embody Google's business model and information policy, Facebook, other American-industry companies, and first of all, democracy, rights and the cost of freedoms, where civil society plays a central role⁷.

⁶ **Zinovieva E.**, Digital diplomacy, international security for Russia. Security Index, No. 1 (104), Volume 19 213, p. 213. Federal Target Program "Electronic Russia (2002-2010) (**Зиновьева Е.**, Цифровая дипломатия, международная безопасность для России. Индекс безопасности, № 1 (104), Том 19 213, с. 213. Федеральная целевая программа «Электронная Россия (2002-2010 годы)»).

⁷ **Zinovieva E.**, Digital diplomacy, international security for Russia. Security Index, No. 1 (104), Volume 19 213, p. 213. Federal Target Program "Electronic Russia (2002-2010) (**Зиновьева Е.**, Цифровая дипломатия, международная безопасность для России. Индекс безопасности, № 1 (104), Том 19 213, стр. 213. Федеральная целевая программа «Электронная Россия (2002-2010 годы)»).

As a rule, Internet Public Diplomacy in the United States is coordinated by the Secretary of State for Public Diplomacy to promote American television and radio channels, as well as to promote social networks, widely used and coordinating the potential of civil society.

Conclusion.

Summing up the above and comparing its own opportunities to the experience of the developed country, it is very purposeful so that the RA Diplomacy Programs are actively and regulated by the RA State Power Bodies, which must generate the potential of civil society in overcoming external challenges. Prior to that, the development of key importance issues on the institutionalization of digital diplomacy, development of the normative legal base, adopting and operation of relevant laws based on the formation of the following basic principles:

- Discrediting the ideological opponents of Armenia.
- Respect the information activities of hostile countries on the Internet.
- The presence restriction of the media of hostile countries.
- Contrary to the foreign cultural policy of Turkey and Azerbaijan through social networks.
- Ensuring the rights and freedoms of the citizens of the Republic of Armenia based on the priorities and priorities of national security and state interests.

The Armenian–Azerbaijani four-day war of 2016, the change of power in 2018, the 44-day Artsakh war of 2020 and the ongoing information wars have clearly proven and continue to prove that the capabilities and technologies of digital diplomacy are very important in the current information age. Especially during the wars, many fake user accounts of social networks opened by the adversary, various tricks and technologies of information warfare were and are aimed at obtaining information about the Armenian side and spreading disinformation. It was during those days that the importance of mastering digital diplomacy methods and working with them correctly, as well as developing and implementing the right policies to

properly operate, manage, regulate civil society activities in the Internet domain, and ensure national security and state interests, became more apparent. Very often, the situation can change due to the fact that different states consider the digital diplomacy programs of the leading state in the field as an attempt to interfere in internal affairs, a case that threatens to violate their state sovereignty. The existence of such fears is confirmed, for example, by regular attempts to block access to Facebook, YouTube, BlogSpot services and restrictions on the rights and freedoms of civil societies or their complete termination, in particular, they were blocked at different times in Vietnam, Iran, Saudi Arabia, Egypt, Pakistan, Myanmar, in North Korea and a number of other countries, and currently also in Russia. In this context, it is not important what poses a great threat to international security. US policy aimed at strengthening information superiority, or the response of authoritarian states such as China or Pakistan, which poses a threat in the form of fragmentation of the global information space? It is important that both phenomena are generated in information spheres with the logic of international politics, the inevitable component of which is the struggle for leadership. In that sense, the component according to which the Azerbaijani side, using its rich resources, managed to make name changes, based on pro-Azerbaijani positions, as well as to make territorial changes of a locational nature in the range of Google Maps electronic maps, related to Artsakh and surrounding areas, is also very characteristic⁸.

Thus, digital diplomacy, including the development of social networks, creates new technologies for the realization of foreign policy goals, strengthening the soft and hard power of the Republic of Armenia and modernizing the institutional aspects and approaches of its civil society. At the same time, it is very difficult in the conditions of the development of democracy to clearly separate soft and hard government and governable and ungovernable civil society. In the

⁸ «Foreign & Commonwealth Office 2016». “Digital Diplomacy. The FCO’s digital work” <http://blogs.fco.gov.uk/digitaldiplomacy> (10.01.2023):

contemporary world order, the Republic of Armenia should strive to strengthen its leadership in the global information space. But it is also necessary to realize that even in the case of occupying leading positions, new risks and challenges can arise, which can increase the vulnerability of management. But it should also be recognized that it can deeply justify the priority goals and aspirations of the modernization of digital diplomacy as the best opportunity to overcome global challenges.

Ռոման Մելիքյան
Քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հայաստանի եվրոպական համալսարան
melikyan.roman2911@gmail.com

**ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ
ԹՎԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԲԱԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

Ժամանակակից աշխարհակարգում ժողովրդավարության և գլոբալացման գործընթացների հետ համատեղ՝ առանցքային դերակատարում ունի նաև նոր տեսակի դիվանագիտության ինստիտուցիոնալ զարգացումը, այն է՝ թվային դիվանագիտությունը: Այն հատկապես կարևորվում է քաղաքացիական հասարակությունում առկա խնդիրների դիտարկման, դրանց համապատասխան լուծման և հնարավոր ռիսկերի և սպառնալիքների հաղթահարման համատեքստում: Այդ առումով, ներկայացված աշխատանքի թեման առավել քան արդիական է, քանի որ թվային դիվանագիտության մոտեցումները ու տեխնոլոգիաները ոչ միայն ունեն մեծ պահանջ և ներգրավվածություն Հայաստանի Հանրապետությունում, այլ նաև առկա է որոշակի միտում մեծացնելու դրանց զարգացման և կիրառելիության հնարավորությունները հայաստանյան քաղաքացիական հասարակության շրջանում՝ իբրև առկա խնդիրների և մարտահրավերների հաղթահարման լավագույն միջոց:

Ներկայացված աշխատանքում դիտարկվում են թվային դիվանագիտության հասկացությունը, մեթոդաբանությունը, առանցքային նշանակությունը, նպատակները, մոտեցումները, խնդիրներն ու տեխնոլոգիաները: Վերլուծվում են դրանց փորձն ու զարգացման

հնարավորություններն արտաքին աշխարհում: Աշխատանքում առանձնապես կարևորվում և հիմնավորվում է թվային դիվանագիտության տեղն արդի դիվանագիտության համակարգում՝ շեշտը դնելով քաղաքացիական հասարակության խորապատկերում զարգացման խնդիրների ուսումնասիրության վրա: Վերլուծվում են թվային դիվանագիտության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության զարգացման և կայացվածության ամրապնդման գործում, ինչպես նաև ներկայացվում և հիմնավորվում են թվային դիվանագիտության արժեշահային կողմերն ու անհրաժեշտությունը վերջինիս ինստիտուցիոնալ անվտանգության և ապահովման համատեքստում:

BIBLIOGRAPHY

1. **Mkrtchyan H.** Digital Diplomacy: opportunities and prospects. "Articles of Yerevan University. International Relations, Political Science", 2016 No. 2 (20), pp. 78-79 (**Մկրտչյան Հ.**, Թվային դիվանագիտություն. հնարավորություններ և հեռանկարներ: «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքացիություն», 2016 № 2 (20), էջ 78-79).

2. We strongly condemn the Azerbaijani name change and distribution of the territories of Artsakh by the Google company. "Aravot.am" information website (Խստորեն դատապարտում ենք Google ընկերության կողմից Արցախի տարածքների ադրբեջանական անվանափոխությունն ու տարածումը. «Aravot.am» տեղեկատվական վեբ-կայք) - [https://www.aravot.am/2022/06/05/1272401/\(08.01.2023\):](https://www.aravot.am/2022/06/05/1272401/(08.01.2023):)

3. Freedom of speech continues to be limited in Armenia. Amnesty International: - **"Azatutyun" R/C official website** (Հայաստանում խոսքի ազատությունը շարունակում է սահմանափակված մնալ. Amnesty International. - «Ազատություն» ռ/կ պաշտոնական վեբ-կայք) - <https://www.azatutyun.am/a/31775802.html> (02.01.2023):

4. Google Maps company should immediately remove Azerbaijani place names from digital maps of Artsakh, restore all Armenian place names. "Iravaban.net" Information website (Google Maps ընկերությունը պետք է Արցախի թվային քարտեզներից անհապաղ հեռացնի ադրբեջաներեն տեղանունները, վերականգնի բոլոր հայկական տեղա-

նունեքը. «Iravaban.net» տեղեկատվական վեբ-կայք) - <https://iravaban.net/398552.html> (08.01.2023):

5. **Digital Diplomacy.** Theory and practice Edited by **Corneliu Bjola and Marcus Holmes.** First published by Routledge, Abingdon and New York, 2015.

6. «**Freedom House**» International human rights organization website («**Freedom House**» միջազգային իրավապաշտպան կազմակերպության. <https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2022> (02.10.2022):

7. «Foreign & Commonwealth Office 2016». “Digital Diplomacy. The FCO's digital work” <http://blogs.fco.gov.uk/digitaldiplomacy> (10.01.2023):

8. **Zinovieva E.,** Digital diplomacy, international security for Russia. Security Index, No. 1 (104), Volume 19 213, p. 213. Federal Target Program "Electronic Russia (2002-2010) (Зиновьева Е. Цифровая дипломатия, международная безопасность для России. Индекс безопасности, № 1 (104), Том 19 213, стр. 213. Федеральная целевая программа «Электронная Россия (2002-2010 годы)»).

9. **Monbio J.,** The need to protect the Internet from "astroturfing" is becoming increasingly important (**Монбио Дж.** Необходимость защитить интернет от «астротурфинга» приобретает все большую актуальность)<http://www.inosmi.ru/world/20110318/167458693.html> (14.02.2022).

10. Approved on 28.01.2002. Decree of the Government of the Russian Federation No. 65. (Утверждена 28.01.2002. Постановление Правительства РФ № 65) - <http://www.internet-law.ru/intlaw/laws/e-rus.htm> (28.01.2023 г.).

Աշոտ Բաղայան
ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ
ashotbadalyan01@mail.ru

**«ՆԱՊԱՍՏԱԿԸ» ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ. ՏԱԲՈՒ, ՀՆԱԲԱ-
ՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ժամանակակից պարսկերենում կան որոշ կենդանանուններ (անգլ. *zoonyms*), որոնք, լինելով բառային նորաբանություններ (անգլ. *lexical innovations*) հիմնականում նոր, մասամբ նաև միջին պարսկերենում, ըստ կազմության նկարագրական ձևեր են և բավական հեշտ են ստուգաբանվում: Մա ինքնին չի կարող նշանակել, որ միջին և հին իրանական լեզվադարաշրջանում ինչպես պարսկերենում, այնպես էլ մնացած իրանական լեզուներում չեն եղել համապատասխան հնավանդ ձևեր դրանց համար, կամ այլ կերպ ասած՝ նշվածից չի կարող բխել, որ իրանցիները չեն ճանաչել այդ կենդանիներին մինչև իրանախոս տարածքների իսլամականացումը:

Այս հոդվածի նպատակն է ներկայացնել վերևում նշվածի մի օրինակ՝ համապատասխան կենդանանվան իրանական նկարագրական ձևերի կողքին բերելով այն անվանումները, որոնք տարածված և կիրառական են եղել հին իրանցիների խոսքում մինչև Մասանյան ժամանակաշրջանի ավարտը և Իրանական սարահարթի իսլամականացումը:

Միաժամանակ հոդվածում փորձ է արվում փնտրելու պատասխանն այն հարցի, թե արդյո՞ք «նապաստակ» բառի համար հնում գործածական բնիկ ձևի կորուստը արևմտաիրանական լեզուներում և, սրան զուգահեռ, դրա պահպանումը որոշ արևելաիրանական լեզուներում, հետևանք է բառարգելման կամ տաբուավորման ինչ-ինչ պատմական գործընթացների իրանական լեզուների տարածման պատմական արեալի մի մասում և նույնի բացակայության՝ մյուս հատվածներում:

Անդրադարձ է արվել նաև գուտ *արտալեզվական* այն իրողություններին, որոնք կարող էին նախ տաբուավորել, ապա և պայմանավորել հիմնական բառաֆոնդի այդ նախնական հնավանդ ձևի կորուստը՝ ավելի ուշ արդեն առաջ բերելով նաև նոր նկարագրական անուններ:

Այս հոդվածում համաժամանակյա և տարժամանակյա քննության են ենթարկվել *նապաստակ* բառի համար վկայված հին և արդի ձևերը պարսից լեզվի պատմության տարբեր փուլերում, ինչպես նաև իրանական այլ լեզուներում և բարբառներում՝ ելնելով այն փաստական իրողությունից, որ պատմահամեմատական լեզվաբանության համար վերջիններով ավանդված և առկա նյութը ունի կարևոր նշանակություն ոչ միայն հնավանդ ձևերի հայտնաբերման, հաճախ վերականգնման, այլ նաև կոնկրետ այս դեպքում տաբուավորման պատճառների պատմական խորքը հասկանալու համար:

«Նապաստակ» կենդանանվան համար դեռևս միջին պարսկերենում վկայված է *xar-gōš* ձևը³⁶⁷, որը *xar-gōš* // *xar-gūš* տեսքով շարունակել է մնալ գործածական նոր և՛ ժամանակակից պարսկերենում³⁶⁸: Նկարագրական այս ձևը, որը ստուգավանվում է որպես բառացի «մեծ ականջ [ունեցող]» (*xar* (<**xara-*) «մեծ»³⁶⁹ և *gūš* (<**gauša-*) «ականջ»), հիմնական նշանակիչն է «նապաստակ» կենդանանվան ոչ միայն ժամանակակից պարսկերենում այլ նաև նոր իրանական լեզուներում և բարբառներում, ինչպես օր.՝ արբ. *xargūš*, աֆթ. *xargu:š*, անրկ. *xerģiš(t)*, արդս. *xegōš*, բել. *kargoš(k)* //

³⁶⁷ Mackenzie D.N., A concise Pahlavi dictionary, London, 1986, p. 94.

³⁶⁸ Steingass F.A., Comprehensive Persian-English Dictionary, 5th ed. London, 1963 (1st ed. London, 1892), p. 456.

³⁶⁹ Բառի հիմնական և առաջնային իմաստն է «էջ»: Իմաստի լայնացման արդյունքում որոշ բարդ բառերում այն սկսել է հանդես գալ նաև «մեծ, խոշոր» նշանակությամբ: Այդպիսի օրինակներ են ժամանակակից պարսկերենում *xarxi[y]ār* «մեծ վարունգ», *xarčang* «խեցգետին» (բառ. «մեծ ճանկ»), *xarkūf* «մեծ բու», *xarkār* «աշխատասեր, մեծ ծավալի աշխատանք անող», *xargāh* «մեծ վրան», *xarmagas* «պիծակ, բռռեխ» (բառ. «մեծ ճանձ»), *xarmūš* «առնետ» (բառ. «մեծ մուկ»), *xarnā(y)* «եղջերափող» (բառ. «մեծ փող»), *xarpūl* «հարուստ, մեծահարուստ, շատ փող ունեցող» և այլն:

xargōšk, բիարբն. *xargü:š*, բշգր. *xārgūš*, էբր. *xaruš*, բջլն. *hārōšā*, քնդ. *haurišā*, հվրմ. *hawreša*, գվրջ. *hārūšā*, հրզն. *harōüš*, քրդ. *karwešk//kawrešk*, լար. *xargoš*, միմ. *xārviš*, նախն. *xergoš*, սզգ. *xaruš*, թար. *hargōš*, վֆս. *xirivš*, վրզն. *xergiš*, զազ. *argūš // ārweš // hargūš* և այլն³⁷⁰:

«Նապաստակ» կենդանանվան նկարագրական մի ձև է նաև նոր պարսկերենում հանդիպող *deraz-gūš* (*deraz* «երկար», *gūš* «ականջ») բառը³⁷¹, որը թարգմանաբար նշանակում է «երկարականջ» և որի հետ կազմության տիպաբանության ու իմաստի տեսանկյունից համեմատելի են օտերենում կիրառական *tærqūs* և *tærqos* (< *darğ-qūs* «երկարականջ»³⁷² < **darga-gauša*³⁷³) բառերը: Ե՛լ օտերեն *darğ-qūs* տարբերակի, և՛ պարսկերեն *xargūš* նկարագրական անվանումների առաջացումը Վ. Աբանը հնարավոր է համարել՝ տաբուական մոտիվներով պայմանավորված:³⁷⁴

Ստուգաբանորեն մեկ այլ հետաքրքիր նկարագրական ձև է նաև արևելաիրանական լեզուների պամիրյան խմբում հանդիպող տարբերակների համար վերականգնված **xšita-duma*- (բառ. «կտրած պոչ») հին իրանական բառաձևը (հմմտ. շգն., բջվ., բրթ. *xšitum*, ոշն., ոշրվ. *xšutum*, սրբլ. *x(i)tim // x(ü)tüm*)³⁷⁵, որին հանգող բոլոր ձևերը Ջ. Էդելմանը համարել է տաբու բառեր (անզլ. taboo words)³⁷⁶:

Նկարագրական մեկ այլ, բայց բավականին հնավանդ օրինակ կարող է լինել նաև իրանական լեզուների համար կողմնային գրականության (գերմ. Nebenüberlieferung) արժեք ունեցող

³⁷⁰ **Hasandust M.**, A Comparative-Thematic Dictionary of the New Iranian Languages and Dialects, vol. 1, Tehran, 2011. (In Persian).

³⁷¹ **Steingass F.A.**, նշվ. աշխ., էջ 507:

³⁷² **Абаев В.**, Историко-этимологический словарь осетинского языка, том III, Ленинград, 1979, стр. 271.

³⁷³ **Hasandust M.**, նշվ. աշխ., էջ 228:

³⁷⁴ **Абаев В.**, նշվ. աշխ., էջ 271:

³⁷⁵ **Edelman Dž.**, “Some taboo-words in Iranian languages of Central Asia”, in: Brigitte L.M. Bauer & Georges-Jean Pinault (eds.), Language in Time and Space. A Festschrift for Werner Winter on the Occasion of his 80th Birthday, De Gruyter Mouton, 2003, p. 123.

³⁷⁶ Տե՛ս նույն տեղում:

գրաբարում վկայված «նապաստակ» բառը, որն ըստ Ա. Փերիխանյանի՝ հանգում է պրթ. **ni-pasta-ka-* բոց. *թաքնվող*, իմաստի լայնացմամբ՝ *վախկոտ* նշանակությամբ³⁷⁷:

Ի տարբերություն վերևում թվարկված բոլոր տարբերակների, որոնք նկարագրական ձևեր են և ամենայն հավանականությամբ հետևանք պատմական ինչ-որ ժամանակաշրջանում իրանական ժողովուրդների մոտ «նապաստակ» կենդանանվան բնիկ ձևի տաբուավորման և լեզվից դուրսմղման, իրանական որոշ լեզուներում «նապաստակ» բառի համար պահպանվում է հնավանդ մի տարբերակ, որը կարող է եղած լինել վաղնջաիրանական ամենահին ձևը և որը գոյություն է ունեցել նաև պարսկերենում մինչև անվան տաբուավորումը և համեմատաբար նոր *xargūš* և *derāz-guš* նկարագրական ձևերի առաջացումը: Խոսքը վերաբերում է վաղնջաիրանական կամ հին իրանական **saha-* ձևին «նապաստակ» նշանակությամբ (հմմտ. հնդիրան. **śasa-* հին հնդկերեն *śāśa-*), որն ընկած է միջին պարսկերեն *sahūy* // *sah-ōg*³⁷⁸ «նապաստակ»³⁷⁹ բառի հիմքում: Գ. Մորգենստիեռնեն ստուգաբանական կապ է տեսել արևելաիրանական լեզուներից աֆղաներենում և արևելաիրանական տարածքներում խոսվող այլ իրանական լեզուներում տարբեր հնչյունական զարգացումներով³⁸⁰ դեռևս պահպանվող հին իրանական այդ ձևի և հնիս. **kas-* «մոխրագույն» վերականգնման միջև՝ համարելով, որ առաջինը կարող է, որպես փոխանունություն, ծագած լինել հենց հնդեվրոպական գունանունից³⁸¹: Գունանուն > կենդանանուն անցման ենթադրությունը թվում է այստեղ ոչ անհավանական, հատկապես

³⁷⁷ **Périkhanian A.**, “‘Lièvre’ et ‘courrier’ en arménien et en iranien,” *Annual of Armenian Linguistics*, 3, pp. 43–46.

³⁷⁸ Միջին իրանական լեզուներից հմմտ. խոթ. *saha-*, խրզվ. *s’k* (**Morgenstierne G.**, *A New Etymological Vocabulary of Pashto*, Wiesbaden, 2003, p. 77)

³⁷⁹ **Bailey H. W.**, “Three Pahlavi Notes”, *Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland*, no. 2, 1931, pp. 424–426, **Morgenstierne G.**, նշվ. աշխ., էջ 77:

³⁸⁰ Աֆղ. *soy*, փար. *sahök*, օրմ. *sikak*, յղ. *sīy*, վխ. *sīy*, սզլ. *sūy* (**Morgenstierne G.**, նշվ. աշխ., էջ 77):

³⁸¹ **Morgenstierne G.**, նշվ. աշխ., Wiesbaden, 2003, p. 77, նսւս՝ **Edelman Dž.**, նշվ. աշխ., էջ 123:

որ պարսկերենում կան դրա այլ օրինակներ ևս (հմմտ., օրինակ, հայերենի՝ գրաբարյան վկայություն ունեցող *աշխէտ, երաշխ, գարտակ, ճարտուկ, ճերմակ* բառերը, որոնք իրանական լեզուներից փոխառվել են որպես ձիու գույն արտահայտող բառեր³⁸²):

Հաշվի առնելով «նապաստակ» կենդանանվան համար հին, միջին և արդի իրանական լեզուներում վկայված ձևերի տարածման աշխարհագրությունը, հատկապես այն, որ միջին պարսկերենում արդեն իսկ վկայված է *hlgwš /xargōš* նկարագրական ձևը և հանդիպում է ավելի հնավանդ և բնիկ հնդեվրոպական, բայց լուսանցքային կիրառություն ձեռք բերած *sahūy // sah-ōg* ձևին գուգահեռ, իսկ վերջինիս հետքը պահպանվել է միայն Մասանյան իշխանության պերիֆերալ (ծայրամասային) գոտիներում՝ Պամիրի և Հինդուկուշի լեռնային շրջաններում, կարելի է ենթադրել, որ «նապաստակի» համար բնիկ ձևի տարուավորումը տեղի է ունեցել այսպես կոչված պետական-պաշտոնական, հստակ նորմավորված գրադաշտականության մեջ: Տարուավորումը շրջանցել է թերևս այն հատվածները, որոնք աշխարհագրական դժվարիասանելի դիրքով պայմանավորված, զերծ են մնացել հատկապես Մասանյան շրջանում խիստ նորմավորված պետական գրադաշտականության թելադրած կանոններից և շարունակել են դավանել այսպես կոչված «ժողովրդական» գրադաշտականություն:

Այս աշխատանքում բերված է միայն կենդանանվան տարուավորման մի օրինակ միայն, սակայն իրանական լեզուներում և պարսկերենում կարելի է գտնել այլ դեպքեր ևս (նկարագրական ձև՝ որպես նորաբանություն//բնիկ հնավանդ ձև՝ որպես արխայիզմ), ինչպես օր. *lāk-pošt // kašaf* «կրիա», *xār-pošt // žūža* «ոգնի»³⁸³ ևն:

³⁸² **Հովհաննիսյան Լ.**, *Հայերենի իրանական փոխառությունները*, Երևան, 1990, էջ 109:

³⁸³ Կովկասյան պարսկերենում «ոգնի» բառի մասին տե՛ս **Tonoyan A.**, “Das Problem des Phonems ž in den nord-tatischen Dialekten von Berg-Schirwan”, *Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes*, band 104, Wien, 2014, pp. 193-198, նաև **նույնի**՝ “Some remarks on the origin of the Iranian stratum of Caucasian Persian (Tati) Lexicon”, *Bulletin of the Institute of Oriental Studies*, vol. 1/1(34), Yerevan, 2021, pp. 167-178, DOI: 10.52837/27382702-2021-34. 1-167:

Հապավումների ցանկ

արգ. Արուզեյդաբադի բարբառ
անրկ. Անարակի բարբառ
արդս. Արդեսթանի բարբառ
աֆթ. Աֆթարի բարբառ
աֆդ. աֆդաներեն
բել. բելուջերեն
բիարն. Բիարանաքի բարբառ
բշգր. Բաշագերդի բարբառ
բշլն. Բաշալանի խոսվածք (գորանի)
բշվ. բաշուվի
բրթ. բարթանգի
գվրջ. Գավրաջուի խոսվածք (գորանի)
գագ. գագայերեն
էրբ. Էրբահիմաբադի բարբառ
թար. Թարի բարբոռ
լար. լարերեն
խոթ. խոթանասակերեն
խրգմ. խորեզմերեն
հնխ. հնդեվրոպական նախալեզու
հվրմ. Հավրամանի խոսվածք (գորանի)
հրգն. հարգանի
միմ. Միմեի բարբառ
յդդ. յիդդա
նահն. Նայինի բարբառ
շգն. շուգնանի
ռշն. ռուշանի
ռշրվ. ռոշրվի
սզգ. Մազգաբադի բարբառ
սզլ. սանզլեչի
սրքլ. սարիքուլի
վխ. վախի
վրգն. Վարգանեի բարբառ

վֆս. Վաֆսի բարբառ
փար. փարաչի
քնդլ. Քանդալուի խոսվածք (գորանի)
քրդ. քրդերեն
օրմ. Օրմուրի

Ashot Badalyan
YSU Department of Iranian Studies
ashotbadalyan01@mail.ru

“RABBIT” IN IRANIAN LANGUAGES. TABOO, ARCHAISM AND NEOLOGISM

The presented article discusses the attested forms of the word “hare” in old, middle and new Iranian languages. It has been shown that, except for some Eastern Iranian languages, the attested and still used forms are lexical innovations, which are a result of the tabooisation of inherited archaic form. An attempt is made to show the inherited Iranian form of Indo-European origin, which was used for the zoonym "hare" before its tabooisation and reduction of the use of geography.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հովհաննիսյան Լ.**, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990:
2. **Абаев В.**, Историко-этимологический словарь осетинского языка, том III, Ленинград, 1979.
3. **Bailey H. W.**, “Three Pahlavi Notes”, Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, no. 2, 1931, pp. 424–426.
4. **Edelman Dž.**, “Some taboo-words in Iranian languages of Central Asia”, in: Brigitte L.M. Bauer & Georges-Jean Pinault (eds.), Language in Time and Space. A Festschrift for Werner Winter on the Occasion of his 80th Birthday, De Gruyter Mouton, 2003, p. 123.
5. **Hasandust M.**, A Comparative-Thematic Dictionary of the New Iranian Languages and Dialects, vol. 1, Tehran, 2011. (In Persian).
6. **Mackenzie D.N.**, A concise Pahlavi dictionary, London, 1986.

7. **Morgenstierne G.**, A New Etymological Vocabulary of Pashto, Wiesbaden, 2003:

8. **Périkhanian A.**, “Lièvre’ et ‘courrier’ en arménien et en iranien,” Annual of Armenian Linguistics, 3, pp. 43–46.

9. **Steingass F. A.**, Comprehensive Persian-English Dictionary, 5th ed. London, 1963 (1st ed. London, 1892)

10. **Tonoyan A.**, “Das Problem des Phonems ž in den nord-tatischen Dialekten von Berg-Schirwan”, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, band 104, Wien, 2014, pp. 193-198

11. **Tonoyan A.**, “Some remarks on the origin of the Iranian stratum of Caucasian Persian (Tati) Lexicon”, Bulletin of the Institute of Oriental Studies, vol. 1/1(34), Yerevan, 2021, pp. 167-178, DOI: 10.52837/27382702-2021-34.1-167.

Աստղիկ Մինասյան
ՀՊՄՀ
arev055@mail.ru

**ԵԶՐԻԱԿԱՆ ԹԱՂՄԱՆ ԾԵՄԻ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

